Գագիկը աշխատում է, թէ՛ նստելու և թէ՛ գնալու միջոցներում միշտ խոհեմ լինել, նորա համար որ, հայրը ասում է՝ Գագիկ, մաքրութիւնը և խոհեմութիւնը աշխարհիս արեւին են: Նա աշխատում է որ շորերի վերայ երբէք մի բիծ ևս չը լինի, որ ուսուցիչը չը պատահի:

Նա էլ տեսնելով Գագիկի այս բարի վարքը, բարքը և սովորութիւնները, աշխատում եմ ամեն կերպ հեռուել նորան, և նմանուիլ նորա մաքրասիրութեան և խոհեմութեան:

Հ Ա Ր Յ Ե Ր

Ինչո՞ւ է շինած այս վարժարանը... Ի՞նչ է շինում առհասարակ քները... լուսահոսքերը... դասերը... Ինչո՞ւ է շինած այս գրասենյակը... Ի՞նչ է շինելու...:

Ա.Ռ.Ա.Մ: Առանց չորս անիւնի որուն չեն շինել:

Հանելուկ: Հարիւր հազար բիւրուոր,
 Բ. Ամեն տեսակ լեզուքներ,
 Գիշեր ցերեկ վազում են՝
 Աշխարհում տարածվում են:

ՏՈՒՆԸ, ԵՒ ՆՈՐԱ ՄԱՍԵՐԸ

Տունը բաղկանում է հեռուեալ մասերից:— Հիմք, որմեր, առաստաղ, դուռը, լուսամուտ, յասակ, սանդուխք, և պատշգամբ:

Հիմք՝ և որմերը՝ տան ամրութեան համար են: Գուռը՝ երթեկեկութեան և փակելու համար: Լուսամուտը՝ լուսաւորութեան: Առաստաղը՝ արեւից, անձրեւից և ձիւնից ու կարկտից պահելու համար: Յատակը՝ մանգալու, նստելու, շրջելու և քնելոյ համար: Սանդուխքը՝ բարձրանալու և իջնելու համար: Պատշգամբը՝ գարնան, ամառուան և աշնան միջոցներում բաց օդեայ նստելու, դուարձանալու, ձաշելու և այլն ժամանակ անցուցանելու համար:

Տան մէջ բնակվում են մարդիք: Տունը բաղկանում է հեռուեալ շէնութիւններից:—

Սրահ՝ որին կից են սենեակները, որոնցից լինում են, ընդունարանը, դահլիճը, սեղանատունը, ննջարանը, մանկանոցը և այլն:

Խոհանոց՝ ուր պատրաստում են ամեն տեսակ կերակուրներ և ուտելիքներ:

Հացատուն՝ ուր լինում է թորօն—թոնիր, որ հաց են թխում:

Կախանատուն՝ ուր կախ են անում ձմեռուայ համար զանազան մրգեղեններ:

Ներքնատուն՝ որ տեղ ամանում են, գինի, օղի, բացախ, պանիր կողակ, իւղ, տառիխ, գոխ, բոզ, էրնջանուկ, սիբեխի գօխ, կապտա և այլն:

Մառան՝ ուր պահելու՞մ են հաց և այլ ուտելիքներ:
Գո՞՞մ ուր կապու՞մ են ամեն տեսակ ընտանեկան սնա-
սու՞ններ:

Ցախատուն՝ ուր դարսու՞մ են, ամբողջ տարուան՝ փայտը,
ցախը, գործելին—սձուխը, գազը, արքատը, կուտրակը և
տարթը:

Սենեակները և բոլոր միւս տները, ունենու՞մ են՝ դռներ,
լուսավուններ, և պահարաններ, որոնք բաժանվու՞մ են հետե-

կալ մասերով.—կողակ, շէ՞մ, դրանդ և կշտանոց:



ՍՈՒՋՈՒԽ, ՓՇԱՏ ԵՒ ՈՒՆԱԲ.

Աշնանը խաղողի հիւթից եփու՞մ են և պատրաստու՞մ երե-
անի մէջ և իւր մի քանի նահանգներու՞մ, սուջուխ, որ շատ
համով բանէ. ևս շատ սիրու՞մ եմ:

Փշտան էլ ևս շատ ե՞մ սիրու՞մ, մենք բաւականին ունենք:
Ունարը լաւ մնալի միք է, բայց մենք չունենք:

- | | | |
|------------------------------|---|----------------------------|
| ճկա. 161 հար. վաթսու՞նմէկ. | } | ճկգ. 166 հար. վաթսու՞նվեց. |
| ճկբ. 162 հար. վաթսու՞ներկու. | | ճկէ. 167 հար. վաթսու՞նեօթ |
| ճկգ. 163 հար. վաթսու՞ներեք. | | ճկդ. 168 հար. վաթսու՞նութ |
| ճկդ. 164 հար. վաթսու՞նչորս. | | ճկթ 169 հար. վաթսու՞նինը |
| ճկե. 165 հար. վաթսու՞նհինգ. | | ճհ. 170 հար. եօթանասու՞ն. |


Հ Ա Ր Յ Ե Ր.

Ո՞ր լեռանին մէջն ենք այժմ... այսօր ամառ քանի՞ն է... և ո՞ր
ամբիսն է... քանի՞ն պարեհան էս դու... որքա՞ն ժամանակ է գալիս էս
դպրոց... դուք պարեհը ունե՞ք... ի՞նչ պարեհներ էսն չէր պարեհդ...
ճի՞շտ է...

Ե՞րբ է հասնում լեռ-ը... Ե՞րբ է հասնում խաղողը... Ենչի՞ց են պար-
բասում լեռը-ը... որքե՞ղ են պարեհ գրքերը...:

Ա.Ռ.Ս.Ծ: Որքե՞ղ սէր՝ այնպէ՞ղ Աստուած:

Հանելուկ: Կա՞յ մի տեսակ բնութիւն,
Թ. Որի վերջն է՝ դառնութիւն:



ՇՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՀ—ԿԱՐԱՍԻՔ.

Գահ, գահոյք, գահաւորակ, աթոռ, բազկաթոռ, որոնց
վերայ նստումեն մարդիկ:

Սեղան՝ որի վերայ վայելու՞մ են ճաշ և ընթրիք:

Գրասեղան՝ որի վերայ լինու՞մ են գրքեր և հաշուամա-
տաններ:

Ցախտ՝ որի վերայ նստու՞մ են գերդաստունք:

Գորգ և կտպերա՝ որոնք փռու՞մ են տախտի վերայ:

Մահիձ—Անկողին՝ որ փռու՞մ են գորգերի մի կողմու՞մ:

Մահձակալ—Անկողնակալ՝ որի վերայ քցած է լինու՞մ գոր-
գը և մեծ անկողինը—մահիձը:

Սավան՝ որ փռու՞մ են անկողնուց վերայ:

Բարձ՝ որի վերայ մարդս գլուխը դնելով՝ քնու՞մ է:

Վերմակ՝ որ քնելու միջոցին կը ծածկուի մարդը՝ որ չ՛մբախի:

Գողկեր—տեղաշոր՝ անուանու՞մ ենք այն ամբողջ շորերին՝
որոնց մէջ քնու՞մ ենք:

Պարտեզ մանկական.

Օրօրոց՝ որի մէջ քնացնում ենք երեխային:
ձոճ՝ նոյնպէս երեխայոց քնելու համար է, որ առաւել
համարաւ կը քնի:

Պահարան՝ որի մէջ դարսում են փոխնորդներ, և այլ ամե-
նամարդ հանդերձողներ, թանգագին իւրերններ և զարդեր:



Հովանոց, — Ամպհովանի՝ — Սրեակալ, — Անձրեակալ՝ — Տա-
ղաարիկ, որ ազատում է մեզ անձրեւից, ձիւնից և արեւից:

Կարպետ՝ որ հասարակ տեղեր են փռում, նստելու համար
թէ գետնի թէ տախտի վերայ:

Թաղէք՝ որ փռում են կարպետների տակը ձմեռուան միջոցը:


Ճլուպ՝ — խտիր՝ որ փռում են ուղակի գետնի և ափստի
վերայ և վրէն փռում են միւս փռումաճքը:

Ծալքատեղ՝ ուր ծալած դարսած են լինում գողները —
տեղաշորը:

Հայելի՝ որին նայում են առհասարակ ընտանիք և ամե-
նայն մարդիք, հանդերձները մաքրելու և գլուխները սանդղելու:

Սանր՝ — որով կարգաւորում են խճճուած մագերը, և մաք-
րում են գլուխը:

Գիրք՝ — որ կարգում են ամենքը, ո՛վ որ շատ գրքեր ու-
նենայ և կարգայ՝ նա՝ անպատճառ երկրիս վերայ համարեա
թէ ամեն տեղերը տեսած կլինի:



Աշտանակ՝ — մամակալ՝ — որի վերայ վառում ենք մոմը, որ
մեր աները լուսաւորում են:



Ղամբարիկ՝ — որի մէջ ածում են նաւթը, և վառում, որի
լոյսը անհամեմատ մոմից շատ լուսաւոր է:

Սուր՝ — թուր՝ — ասրճանակ՝ — հրացան՝ և այլն, առհա-
սարակ այս բոլոր զէնքերը պահում են ամենայն մարդիկ իւր-
եանց տըներում, որ թէ ճանապարհ գնալու և թէ այլ մի-
ջոցներում՝ թշնամիների վնասներից ազատ մնան:

Կացին՝ — որով ձրում կամ ճեղքում են տան եղած ցա-
խերը, փառարանների համար:

Շիշ՝ — որոնց մէջ ածում են գինի, օղի և այլ ըմպելիք:
Պասկեր՝ որ կախում են պատի վերայ, սենեակները գե-
ղեցկացնելու համար:

Նրճանակ՝ որոնց մէջ տեղաւորում են պատկերները:
Ղենճակ՝ — սրբիչ, որ լուացուած միջոցին սրբում են երե-
սը և ձեռները:

Ժամացոյց՝ որով խնայում է օրուայ գիշերուայ միջոցները:
Բաժակ՝ որով խմում են գինի և օղի:

Գաւաթ՝ որով խմում են, թէյ, ջուր և այլ բանակերքներ:
Արկը՝ որի մէջ պահում են թանգաղին շարեր, կանանց
զարդեր, և ասան արծաթեղեններ:

Կաթսայ՝ որով կերակուր են եփում:

Քափքիր՝ քափքաշ որով կերակուրների քափն են քաշում:

Քամոց՝ որով քամում են բրինձը և այլ ուտելիքները:

Գաւ՝ գորակ՝ կուժ՝ թակոյի, սափոր, կուլայ, —
պուլպուլակ, բղուլ՝ որոնցով ջուր են բերում:

Հեշտանո — ինքնանո՝ որով պատրաստում են թէյ և սուրջ:

Անուարը՝ որով բերում են և ասնում պատրաստած թէյ,
սուրջ և այլ կերակուրներ:

Ափսէ՝ որի մէջ դնում են և ածում զսնազան ուտելիքներ:

Կոնք՝ որի մէջ լուացվում են:

Գանակով պատառաքաղով վայելում են նախաձաշիկ, ձաշ,
ընթրիք և զանազան մրբեղեններ:



Սփոոց՝ որ փռում են սեղանի վերայ և վրէն կարգաւոր-
ում են ձաշը և ընթրիքը:

Սկաւառակ՝ որի մէջ լցնում են ամբողջ սեղանակիցների
համար կերակուր, որից ամենքը վերցնում են իրենց բաժինը:

Պաուկ — կճուճ՝ որի մէջ եփում են ջրալի կերակուր դԷԸ
խաւորապէս գիւղացիները:

Սանդ՝ որի մէջ ծեծում են՝ աղ, ձաւար, և այլ բաներ:

Թաղար՝ թեշա՝ որոնց մէջ լուանում են ասան փոխնորդ-
ները, որին ասում ենք լուացք:

Փուքս՝ որով բորբոքում են կրակը:

Սակառի — քթոց՝ զամբիւղ, որոնց մէջ ժողովում են պար-
տիզի և այգիների պտուղները:

Զրհան-դոյլ՝ որով ջրհորից ջուր են հանում:

Լապտեր՝ որը փռում են ամառը պատշգամբում, որ քա-
մին հանոցնէ և մութ գիշերները մի տեղ դնող գալիս՝ ունե-
նում են իրենց հետ վաւած, որը ճանապարհը լուսուորէ:

Կողպէք՝ որով փակում են դռները:

Համբան:

- | | |
|-----------------------------|---------------------------|
| ճհա. 171 հար. եօթան. մէկ. | ճհգ. 176 հար. եօթան. վեց. |
| ճհբ. 172 հար. եօթան. երկու. | ճհե. 177 հար. եօթան. եօթ. |
| ճհդ. 173 հար. եօթան. երեք. | ճհը. 178 հար. եօթան. ութ. |
| ճհզ. 174 հար. եօթան. չորս. | ճհթ. 179 հար. եօթան. ինը. |
| ճհտ. 175 հար. եօթան. հինգ. | ճհւ. 180 հար. եօթան. |

Հանելուկ: Ինքը անշարժ կայ՝ բոյց մարդիկ, —
ժ. Նորանով աշխարհք են պտըտում:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈՒՏԵԼԻՔ.

Պանիրը, դնում են շուկայում ամառը՝ և հողէ ամանների
մէջ աղ են դնում, ամբողջ տարուայ համար:

Միտը՝ կոտորում են և շարում շամփուրի վերայ ու խո-
րովում են, որին ասում ենք՝ ԽՈՐՈՎԱԾ:

Հաւկիթը և իւղը իմիասին եփում են, որին ասում ենք
ԵՔՈՒՅ:

Հաւկիթը հարում են և ածում գաղ արած իւղի վերայ
ու եփում են մինչև կարմրելը, յետոյ ածում են վրէն ու փ,
կամ շաքարի փշուտնք և կամ մեղր ու վերցնում, որին ան-
ուանում ենք ՁՈՒԱՉԻՂ:

Կաթը և բրինձը իմիասին եփելով, ասում ենք՝ կաթնով:

Բրինձը և իւղը խմիասին եփում են, որին անուանում ենք քաշովի:

Զուկը լաւ շրւանում են, կտորում են և խաշում, անուանում ենք խաշած ձուկն:

Ոչխարը կամ այծը մորթում են և կախ են անում թոնլումը, որին անուանում ենք ԽՈՐՈՎՈՒ:

Ոչխարը մորթում են և եփում, բաժանելով փողոցներում անց ու դարձ անողներին և բաժանում են աղքատաց, որին ասում ենք մատաղ:

Ցորենը բովում են, հետը խառնելով կանէփ և քնջիթ, որին անուանում ենք՝ ԽՍԾԱՂ-ԱՂԱՆՁ:

Բոված ցորենը երկանքով աղում են, որ լինում է փոխինդ:

Փոխինդը խառնում շաղաղում են ուռփի կամ մեղրաճրի և կամ շաքարաճրի հետ և փոքրիկ գնդեր են անում և վաքելում, որին ասում ենք՝ ՓՈՒԻՆՁ:

Փոխինդը և ջուրը խառնելով եփում են յետոյ հալած իւղը ածում են վրէն, որին անուանում ենք՝ ԽՍՇԻՆ:

Ալիւրը, ջուրը և իւղը խմիասին խառնելով՝ եփում են, յետոյ ուռփը, մեղրը կամ շաքարը ածում են վրէն, որին ասում ենք՝ ԽԻԻՍ-ԽՍԻԻՍ:

Վարունգը ժողովում են շատ փոքրերից և գնում են հողէ աճաններում քացախով, որը լինում է թրթու:

Հաւը-ձուտը ուտում են տապակած և խաշած:

Տապակած ձուկը, տարուայ մէջ երկու երեկոյ կայ՝ որ ամենայն Հայի ոներում կը տեսնես, և դորա համար, այդ օրերը շատ թանկ են լինում:

Կանաչեղենը պակաս չի լինիլ Հայաստանում, Հայ մարդոց սեղանից:

Խաւիժը ուտեցնում են միշտ ծնունդ նստող կանանց նոյն օրերին:

Հ Ա Ր Յ Ե Ր .

Սեղանը ինչից են շինում... պարունը ի՞նչ բանից է... զանգիւղը... ի՞նչ բանից են շինում... ի՞նչ բանից են գործում... ի՞նչ բանից են շինում փոխինդը... ո՞վ է շինում... ո՞վ է շինում օրորոյը... լուռը ուտում ենք, ինչ է ուրը... սէխը ու յօթերունը կարում ենք... ինչ խաղողը... ի՞նչ բան է կոնիճը... երբ են օրհնում խաղողը... ի՞նչ բան է պիպոնայու բան բանը... ի՞նչ են անում բարբելը...

Մարդը վարդից փափուկ է,
Եւ քարից ամուր:

ԱՌԱՄ. Տանց մէ՛ն՝ ինչո՞ւ երջու, ինչ շուրջ, ինչպէ՛ս փոքր պոռնի (կեր:)

Հանելուկ: ԺԱ.

| | |
|-----------------------|--------------------------|
| Ա. | Բ. |
| Կայ մի տեսակ արարած, | Հացը գտած փայրկեանին, |
| Ընտանեաց մէջ միացած,— | Իւր մայրական զթութեամբ,— |
| Նրեկայքը հեռն առած՝ | Ինքը երբէք չէ ուտում՝ |
| Որոնում է կտոր հաց:— | Զաւակաց է բաժանում: |

Համբանք:

- | | |
|-----------------------------|---------------------------|
| ճձա. 181 հար. ութսունմէկ. | ճձդ. 186 հար. ութսունվեց. |
| ճձբ. 182 հար. ութսուներկու. | ճձէ. 187 հար. ութսունեօթ |
| ճձգ. 183 հար. ութսուներեք. | ճձը. 188 հար. ութսունութ |
| ճձդ. 184 հար. ութսունչորս. | ճձթ 189 հար. ութսունինը |
| ճձե. 185 հար. ութսունհինգ. | ճղ. 190 հար. քննսուն. |

ԳԻՒՂԱՅԻՆ ԵՒ ԳԱՆԱՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՒՈՐԸ.

Գիւղացին գաւառ մի թանգագին քար, որը և վճռեց թագաւորին նուիրելու: Գնաց արքունիք և սկսեց հարց ու փորձ անել թագաւորին ներկայանալու կերպը...: Թագաւորական սպասաւորներից մինը հարցրեց, ի՞նչ գործ ունէ թագաւորի հետ, գիւղացին պատմեց...: Սպասաւորը ասաց: Ես'տ լաւ, ես բեզ կներկայացնեմ թագաւորին, միայն այն պայմանաւ՝ որ, ինչ որ ստանաս թագաւորից, նորա կէսը իմնէ: Գիւղացին աւանդեց համաձայնեց:

Սպասաւորը գիւղացուն ներկայացրեց թագաւորին:

Թագաւորը վերցրեց քարը շատ հաւանեց, և ասաց՝ ի՞նչ պարգև կը ցանկանաս տամքեղ, գիւղացին պատասխանեց:—

Ես ուրիշ պարգև չեմ ցանկանում Ձեր մեծութիւն, այլ տուէք ինձ յիսուն մորակ: Միայն, ես Ձեր մեծութեան սպասաւորի հետ խօսք եմ կապել, որպէս զի, պարգևը կէս անկնք: Ապա ուրեմն 25 մորակը ինձ տուէք, իսկ միւս 25 մորակը նորան:

Թագաւորը ծիծաղեց և գովեց գիւղացու հնարագիտութիւնը, սպասաւորին իսկոյն պաշտօնից դուրս արեց, իսկ գիւղացուն պարգևեց 1000 ռուբլի:

Հ Ա Ր Յ Ն Ր.

Գիւղացին ինչ էր արել... Ինչ էր շինած հայելին... ումից ենք սպանում գրեթէ... իսկ գրեթէ զոհուող... ի՞նչ էր պատմում... պատմում էր ինչ էր արել... Ինչ էր արել... Ինչ էր արել... Ինչ էր արել... Ինչ էր արել...

ԱՌԱՄ: Բերան իմ թոյն ապերա Բուն չը կայ:

Հանելուկ: Աշխարհիս մէջ մի հիւր կայ,
ԺԲ. Առանց նորան տուն չը կայ,
Ինքը երբէք չէ խօսում՝

Բայց մարդիք բարեւում են:

- | | | | |
|----------|----------------------|----------|--------------------|
| Ճղա. 191 | հարիւր իննսունմէկ. | Ճղա. 196 | հարիւր իննսունվեց. |
| Ճղբ. 192 | հարիւր իննսուներկու. | Ճղէ. 197 | հարիւր իննսունեօթ |
| Ճղգ. 193 | հարիւր իննսուներեք. | Ճղբ. 198 | հարիւր իննսունու թ |
| Ճղդ. 194 | հարիւր իննսունչորս. | Ճղթ. 199 | հարիւր իննսունիննը |
| Ճղե. 135 | հարիւր իննսունհինգ. | մ. 200 | երկու հարիւր: |

ԿԱՑՈՒՆ ԵՒ ԲՂՆՁԷ ԱՍԱՆԸ.

Մի ամառուան լուսնեակ գիշեր, պատշգամբում դրուած է լինում բղնձից ջրի ամանը, կատուն մօտենալով ամանին, գլուխը մնցնում է մէջը ջուր խմելու, բայց դժբաղդաբար խեղճ կենդանին այլ ևս չէ կարողանում գլուխը հանել, այլ սկսում է այս և այն կողմը թափահարել, մինչև որ, վայր է ընկնում պատշգամբից ցած քարերի վերայ, և այն տեղից դէպի պարտեզը, կէս գիշերին շրջաթրղկոցը ընկնում է պարտեզը և բակը, բոլոր դրացիների շները սկսում են իրենց հաչոցները, իսկ կատունը իրենց մաւոցները: Ահա՛ այս տարօրինակ տեսարանը բոլոր դրացիներին քնաթաթախ վեր է կացնում իմանալու եղելութիւնը, ո՞րքան ծիծաղալի է լինում նորանց համար, երբ տեսնում են խեղճ կատուն այն շարժարանքի մէջ, որ վերջապէս հագիւ հագ կարողանում է իւր գլուխը հանել արիւնաթաթախ և ջախջախուած դրութեամբ, ասելով՝ այո՛, եամեն տեղ չէ կարելի գլուխ մնցնել:

Յ Ա Ր Յ Ե Ր.

Մտքովի մէջ քանի՞ օր ուտին ունենա... որքան աստ... որքան էջ
են բերում փայտը... ինչէ՞ համար ենք հաճում հանրեւոյն... էրբէ՞ են
անում աշխատել... ի՞նչ է ասելիս մեզ հոգը... ի՞նչ է ասելիս է հարկաւոր
չին... ինչ աւանդել... եղբ... ուղարկ... ի՞նչ է ասելիս է պիտանայու
շունը...:

ԱՌԱՄ: Այ՛ տղայ տղայ: է՛ք, քան ինչ ասելին համար է՛ք:

Հաննիլով: Չորս եղբայրք են մի զլեարկ,
ժԳ. Անլեզու են և անխախտ,
Ի՛նչ կողմ ուզես հեղ կրգան՝
Հանգստութիւն քեզ կրտան:

- | | |
|---------------------------------|----------------------|
| յ. 300 երեք հարիւր. | ս. 2000 երկու հազար. |
| ն. 400 չորս հարիւր. | վ. 3000 երեք հազար. |
| շ. 500 հինգ հարիւր. | տ. 4000 չորս հազար. |
| դ. 600 վեց հարիւր. | ր. 5000 հինգ հազար. |
| չ. 700 եօթ հարիւր. | ց. 6000 վեց հազար. |
| պ. 800 ութ հարիւր. | ւ. 7000 եօթ հազար. |
| ջ. 900 իննը հարիւր. | փ. 8000 ութ հազար. |
| ռ. 1000 հազար: | ք. 9000 իննը հազար. |
| ժռ. 10,000 ասոր հազար. | |
| իռ. 20,000 քսան հազար. | |
| ճռ. 50,000 յիսուն հազար. | |
| ճռ. 100,000 հարիւր հազար. | |
| եճռ. 500,000 հինգ հարիւր հազար. | |
| թճռ. 900,000 ինն հարիւր հազար. | |

Յ Ո Ր Է Ն Ը Ե Խ Կ Ո Ր Ե Կ Ը.

Յորենը մի օր ասաց կորեկին, եղբայր, ես գնում եմ օտար
աշխարհ՝ ինդրեմ դու մի միջոց իմ պաշտօնս կատարի, այն է՝
հաց դարձիր և կերակրիր ժողովրդիս, ինձ նման երկար հաց
չգառնաս, այլ՝ կօլը եղիր: Կորեկը պատասխանեց, — շա՛տ բարի,
ցորեն եղբայր, ես կըրգառնամ կօլը հաց և կը կերակրեմ բո-
լորին: Յորենը գնաց, սափն ընկաւ: Անցաւ բաւականին միջոց
որ կորեկը կերակրում էր բոլորին, մի օր կորեկը մտածեց, թէ
ինչէ՞ ես ևս երկար հաց չեմ դառնում, որպէս ցորենը. նա ըս-
կանց երկարել և երբ կամենում էր հաց դառնալ՝ յանկարծ փը-
շուր փշուր եղաւ. ի հարկէ շա՛տ տիրեց իւր սխալմանց հա-
մար: Յանկարծ վերադարձաւ ցորենը, և երբ տեսաւ որ կորե-
կը փշուր փշուր է եղած՝ ասաց, կորեկ եղբայր, քեզ ո՞վ ասեց
որ դու քո չափից դուրս երկարես... որ այդ օրն ընկես. ու-
րեմն գնա՛ դարձեալ թռչուններին կերակրելու...:
— Նշանակում է՝ որ ամեն մարդ պարտական է իւր չափին
սպրելը հպարտութիւն, գոռոզութիւն և ինքնահաւանութիւն
երբէք չսկեռքէ ունենայ, ապա թէ ո՛չ կորեկի՛ նման փշուր
փշուր կը լինի:

Յ Ա Ր Յ Ե Ր.

Ի՞նչ է ասելիս է անել հարաւ... հարա՞ն է որքան էս լուսնի...
ինչէ՞ է է հարա... ի՞նչ է ասելիս է ասելիս է... և ի՞նչ է ասելիս է... ի՞նչ
գործով է պարտաւոր հարա... որքան է ինչ ասելիս է... ասելիս է ասելիս է...
և եղբայր... և ի՞նչ են ասելիս անունները... ասելիս է ասելիս է... ասելիս է...
բաւ... հարաւի ի՞նչ պէշ են աշխատանք... ի՞նչ է ասելիս է... ասելիս է...
ասելիս է ասելիս է...
ԱՌԱՄ: Ասա՛ ինչ, աս՛ հեղ ես բարեկամ, ինչ ես հասեմ՝ լե՛ք ի՞նչպէս
պղայ ես դու:

Հանելուկ:
ԺԴ.

Ոսկորները, դէն ենք քրցում,
Մեզնից ծածուկ ժողովող կայ,—
Յետոյ ինքներս փողով աւելում,
Վայելում ենք շատ համոխայ:

ՄԱՐԳՈՅՍ ՄԱՐՄՆՈՅ ՄԱՍԵՐԻՅ.

| | | | | |
|----------|----------|---------|----------|-------------|
| Գլուխ. | Քներակ. | Լանջ. | Լեզու. | Ծործորակն. |
| Ձեռք. | Փող. | Բարձն. | Ատամ. | Գարշապար. |
| Կուռն. | Ուս. | Ազգը. | Կոկորդ. | Ծոխթ (ծիտ) |
| Թէն. | Փոր. | Ծունկն. | Գանդ. | Արտեանունք. |
| Ուրբ. | Աճուկ. | Ներբան. | Ուզք. | Ծիծ. |
| Քամակ. | Արմունկ. | Ականջ. | Թիկունք. | Ստինք. |
| Մէջք. | Ծունկ. | Աչք. | Յօնք. | Լինդ. |
| Կուրծք. | Բերան. | Նրնս. | Այտ. | Որկոր. |
| Պարանոց. | Մատներ. | Քիթ. | Նրթունք. | Գիրկ. |
| Բազուկ. | Նղունդ. | Ռունդ. | Ճակատ. | Մորուք. |

ԽՕՍՔ, ՁԱՅՆ — ՀՆՁԻԻՆ՝ ՔԱՆԻ ՄԻ ԱՐԱՐԱԾՈՅ:

Մարդը՝ խօսում է և երգում, իսկ երեխն ճչում է: Կապիկը՝ կարկաչում է, իսկ խոզը խանչում է: Շունը՝ հաչում է՝ իսկ կատուն՝ մլաւում է: Ձին՝ խրխնջում է՝ իսկ էշը զոււմ է: Առիւծը և Յուլը՝ բառանչում են և մռնչում, իսկ Խոզքորակը՝ ճչում է: Հնդկահասը՝ կլանում է, իսկ Աքաղաղը՝ խօսում է: Բազը՝ կարկաչում է, իսկ Սապն՝ կառաչում է: Ազաւնին՝ և Տատրակը՝ փչում են: Ծիծառը՝ ձուլուցելով ձրչում է, իսկ Արտուտը՝ զեղգեղելով երգում է: Սոխակը՝ սիրահարուած երգում է, իսկ Ծիտը՝ թուլալով ձլվում է: Սձը՝ Փշփշալով սու-

լում է, իսկ Լորդուն՝ խշխշում է: Ճագարը՝ ոռնալով կախկանչում է, իսկ Գործը՝ կռում է: Կռունկը՝ կրակում է, իսկ Բուն՝ բլբլում է: Բղեղը՝ բրղղում է, իսկ Մուկը՝ ծրվծրում է: Ագռաւը՝ զոււմ է, իսկ Ոչխարը՝ մայում: Այծը՝ և Գառը՝ մայում են և մրկրկում: Չուրը՝ խշշում է և կարկաչում: Ամպը՝ որոտում է կայծակը խփելուս՝ և գոռում:

Հ Ա Ր Յ Ն Ր.

Ո՞վ է ճշմարտ... ո՞վ է ճրճըւտ... ո՞վ է ճընչում... ո՞վ է խօսում... ո՞վ է հաչում... ո՞վ է երգում... ո՞վ է բըղղում... ո՞վ է հարբում... է՞բ է գալիս չիւն... է՞բ էն կանաչում ծառերը և գետնները... է՞բ է շոգ շինում... է՞բ էն շինում պարտերը...: ո՞վ է օտնում... ո՞վ է խրխնջում... ո՞վ է շայ շինում...:

Շունը հաչում է, իսկ կատուն... էշը զոււտում է, իսկ չին...: Կայծակը ճչում է և կարկաչում, իսկ դառնում է...:

Ա.Ս.Ծ. Ծովի Տօս չուին է ինչ հողէն,
Բայց բերէն է՝ հարիւր հողէն:

Հանելուկ:
ԺԵ.
Բանաւուշ շապիկներով,
Հիւր են մանում աները,
Շորերը ողջ հանուելով՝
Մըտնում են մեր բերանները:

ՏԱՐԻՆ ԵՒ ԻՒՐ ՄԱՍԵՐԸ.

Հասարակ տարին ունի երեք հարիւր վաթսուն և հինգ օր: Չորս տարին մի անգամ լինում է նահանջ տարի, որ երեք հարիւր վաթսուն և վեց օր է: Տարին ունի տասն և երկու

ամիս: Ամիսն ունի երեսուն կամ երեսուն մէկ օր, միմիայն Փետրվար ամիսն է որ հասարակ տարիներում լինում է քսան և ութն օր. իսկ նահանջ տարում՝ քսան և ինն օր: Տարին ունի յիսուս և երկու շաբաթ: Շաբաթն ունի եօթն օր, — եօթնեակ: Օրը ունի վեց զլեաւօր մասն, Օր, Առաւօտ, Միջօրէի, երեկոյ, Գիշեր, և Հասարակագիշեր: Օրագիշերը՝ այն է, գիշեր և ցերեկը ունի քսան և չորս ժամ: Ժամը ունի, վաթսուս րոպէ. իսկ րոպէն՝ վաթսուս վայրկեան: Ամբողջ տարին ունի չորս եղանակ. Գարուն, Ամառ, Աշուն և Ձմեռ: Այժմ տեսնենք ի՞նչ են այդ չորս եղանակները:



Գ Ա Ր Ո Ւ Ն .

Վարուայ, առաջին մարտի և գեղեցիկ եղանակն է՝ Գարունը, որ սկսվում է Մարտի 20-ին: Սկսում է օրերը և գիշերները հաւասարուիլ. եղանակը տաքանալ, որ ամենայն ծառ, տունկ, պարտէզ, դաշտ, այգի, անտառ՝ սկըսում են կանաչանալ և թռչունները քաղցրանուագ երգել: Սոխակը վարդի վերայ սիրահարուած լինելով՝ ամբողջ գիշերը պտոյտ է գալիս նորա շուրջը մինչև որ բացուի, որով բացվում է վարդը և անուշահոտ ծաղկուեքը, ծառերը ծաղկում են՝ և սկսում են պտուղները երևալ: Մարդիկ սկսում են պարտէզները մաքրել, կորիզներ ցանել, տունկեր աւելացնել, ծառեր կարգաւորել և պատուաստել, այգիների թաղերը յետ տալ մասնները բացել, էտուլը սկսել, և չոր ծառերը կտրատել: Ամենայն կարգի մարդիկ սկսում են նոր հանդերձներ կարել տալ, մաքուր պատրաստուել Ս. Զատիկի համար:

ԱՌԱՄ: Կրակն առաջին՝ շաբաթի առաջ, չի շինի:
 Հանելուկ: Չորս եղբայրք են, խիստ անհաշտ,
 ժ.Ձ. Ամբողջ աշխարհ տուն և դաշտ,
 Հերթով անգոջ մանում են՝
 երեք ամսից զընում են:

Ն Ո Ւ Ա Փ Ա Ր Ա Ն Ք .

Դափ. Ծնծղայ. Քնար. Շեփուր, Աթառ. Բամբիռն. Զընար. Զուլթակ. Բամբ. Արինգ. Սաղմոսարան. Թմբուկ. Բանդիոն. Դանօն. Տախլ. Տասնաղի. Փանդիոն. Փող. Վին. Աղիք. Լար. Կնդնդոց. Դաշնամուր.

ԱՌԱՄ: Բըս'ըբ հըլալանեբ հեցիբ:

Ա Մ Ա Ռ Ն .

Տարուայ, երկրորդ եղանակն է՝ Ամառն, որ սկսվում է Յունիսի 19-ին. այս է ահա ամենաշոգ միջոցը, որ ցերեկը ըսկսում է երկարիլ, իսկ գիշերը կարճանալ. որ ցանում են, հընձում են, զիլում են, պտուղները հասնում են, — գեղձ, տանձ, խնձոր, պալ, կեռաս, ծիրան, վարունգ, սեխ, ձմերուկ, — գլոր, թուզ, թութ, և ամեն անասկ պտուղներ լիքն են լինում փողոցներումը, սկսում են ջրիլ պարտէզները, այգիները, և ցանքերը: Մարդիկ հագնվում են թեթե շորեր: Կատուպանները — Այգեպանները սաստիկ զբաղուած են լինում գիշեր և ցերեկ այգիների մէջ: Իսկ գիւլացիքը՝ քրտինքների մէջ, դաշտերում

իրանց ցանքերի հետ են խաղում: Քաղաքներում՝ առևտուրը բոլորովին թուլացած է լինում, խանութի մէջ ապրանաց տէրերը ճաշուայ միջոցում խոխոացնելով քնած են լինում: Շինութիւնները ամենաշատ լինում են ամառը: Հարուստ մարդիկ գնում են ամառանոց:

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻԹԵՐ

Հող, Զուր, Դարման, Կաւ, Կիր, Քար, Կղմինդր, Եղիւս, Փայտ, Գերան, Տախտակ, Մարտակ, Բաղդադի, Երկայն փայտ սեան վերայ, Սեպ, Բլեւո, Եղէգն, Չիւթ, Դուան քամակից մեծ փայտ որ մտնում է պատի մէջ, Սողնակ:



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՔ


Ա. ՅԱՄԱՔԱՅԻՆ.

Սայլապան, Կառապան, Զիւպան, Էշապան, Աւանակապան, Սայլ, Սայլեր, Սայլեռնակիր, Սայլակ, Սուրհանդակասայլ: Հովանաւորասայլ Կառք, Շոգեկառք, Սայլորդ, Օդապարիկ, Երկաթուղի:

ԱՌԱՄ: Իրուստի խոստովէ չեն՝ դասեր ըստ համար պէտք շինի:

Հաներուկ: Ժէ.

| | |
|-----------------------|----------------------------|
| Ա. | Քայց երբ կամիս խօսեցնել, |
| Աւազան է զանազան, | Նոքա իսկոյն կը խօսեն, |
| Լիքն է ջրեր խօսերով, | Թէ՛ խնդութիւն, բարկութիւն՝ |
| Կեղուներ են բիւրաւոր՝ | Ինչպէս ուզես պատրաստ կան: |
| Անխօս մի տեղ կը մնան: | |



Բ. ԾՈՎԱՅԻՆ.

Կուր, Մակոյկ, Կաւակ, Վարբայ, Յաձեղածի, Կաւ, Էռազաստանաւ, Շոգենաւ, Գէկ, Գէկավար, Կաւապետ, Կաւարար:

ԱՌԱՄ: Ծովը աւելի էլ չեմպաշէն ա՛յն ժամանակ՝ երբ սաստիկ քամի շինի:



Ա Յ Ո Ւ Ն.

Ամառը վերջանալով՝ մտնում ենք տարուայ, երբորդ եղանակը, որ սկսվում է Սեպտեմբերի 19-ին. որ օր ու գիշեր հասարակում է, այն է՝ Աշունը, որ սկսում է եղանակը փոքր առ փոքր հովանալ բոլոր զիւղացիքը իւրեանց ցորենները, բրինձները, բամբակները և ամեն իւրեանց պտուղները և բա-

Պարտէզ մանկական.

րիքները բերում են քաղաքները ու ծախում են. և այն գոյացած փողերին՝ տան համար հագնելիք և ուրիշ բաներ են գրնում ձմեռուան համար, ուրեմն զիւղացիք և քաղաքացիք միմիանց պարտական եղբայր են և ընկեր, որ առանց մինը միւսին՝ չէ կարող ապրիլ երբէք: Խաղողները սկսում են քաղել, զինի ամաններ, մասները թաղել, այգիներէնց ցախերը և արքամները ժողովել, Սենեակները տաքացնել, առանց կրակի տարուան ցորենները աղալ, ձմեռուան հացը թխել, տանձ, խընձոր, սերգելիլ, խաղող, զեղնաշըր կախել, փայտ պատրաստել, տան՝ կահ-կարասիքը մաքրել և տըները վեր սրփել: Առհասարակ մարդիկ, սկսում են խրեանց ածբողջ պատրաստութիւնը հոգալ, և ձմեռուան համար տաք հագուստներ ունենալ: Աշնան օրերը հասնելով՝ սկսում են ծառերի տերեւները զեղնել, որով լինում է Տէրեւախի՞ն՝ որոնք ծածկում են կանանչազարդ այգիները և պարտէզները:

Չ Ե Ռ Ի



Մասներ: Բոյթ, Յուցամասն, Միջամասն, Մատանեմասն, և Ղկոյթ: Թաթ, Թիզ, Ծափ, Մատանի, Կռուփ, Բուռն, Եղունգն, Յօդք. Ըփ. Բուռնց:

Հ Ա Յ Ո Ւ Տ Ե Լ.

Հաց ուտելը բաժանվում է երեք կարգ: Առաւօտեան հացին ասում ենք՝ Նախաճաշիկ: Միջօրէի հացին ասում ենք՝

ձաշ: Իսկ երեկոյեան հացն է՝ Բնթրիք: Առնափոք սեղանն է՝ Նախաճաշը: Առնաճեճ սեղանն է՝ ձաշը: Իսկ Քջակ սեղանն է՝ Բնթրիքը:

Ա.Ռ.Մ: Պատրաստութիւն տեսնողը՝ լաւ է հարստից:

Հանելուկ: ԺԲ.

| | |
|----------------------------|--------------------------|
| Ա. | Բ. |
| Ինքը ջո՛ւր է, անմարմին, | Ո՛չ մի զիշեր չենք կարող: |
| Շատ վաթթար էլ հաս ունի, | Առանց նորան մենք մնալ |
| Բայց մենք նորան գրնում ենք | Սկսում ենք բազմացնել |
| Մեր տըները բերում ենք: | Եւ ինքներս խոնարհել: |

Ձ Մ Ե Ռ Ն.

Տարուայ՝ չորրորդ եղանակն է Ձմեռն, որ սկսվում է Դեկտեմբերի 20-ին. որ ցերեկը սկսում է կարճանալ, իսկ զիշերը երկարիլ, որ ամեն մարդ պատրաստուած, սկսում են վառարանները վառելով սենեակները տաքացնել, իրանք տաք հագնվում են, զիշերները երկար նստում են, խօսում են, կարդացողը կարդում է, կար անողը կարն է անում, երեխայքը խրանց դասերն են պատրաստում: Հրապարակի մէջ մի մարդ չեն զանիլ. սկսում է ցուրտը և բուքը, զալիս է անձրև և ձիւն, որով սպիտակվում է ողջ երկիրը, ծառ, անտառ, գոշտ, մարդագետին և այլք՝ ծածկվում են ձիւնով, և երբեմն պատում է մառախուղ: Այլ ևս չէ լավում թռչունների ճըրվացները, նոցանից մեծ մասը զնոցած են լինում տաք երկըրներ:

Հ Ա Ր Յ Ե Ր.

Դեկտեմբեր ամիսը՝ Օգոստոսի հետ քարեկամ էն... Ենչու՞ չէ՞ն քարեկամ... ո՞ր ամիսներն են միեանց քարեկամ... Ենչի՞ համար է աշիւ-
րը... Կանի՞ օրէ պարին... Ե Կանի՞ եղանակ ունէ... Երբ է շինում
շապ շոգ...:

Ք Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք.

Շէն, Լւան, Գիւղ, Լգարակ, Գաւառ,
Գիւղաքաղաք, Քաղաքամասն, Քաղաք: Կա-
հանգ, Վաճառաշահ քաղաք, Մայրաքաղաք,
Լքքայանիսա, Լմարանոց, Կաւահանգիսա:



Մ Ի Մ Ի Ա Ն Յ Հ Ա Ն Դ Ի Դ Ե Լ.

Մեծ ու փոքր, և առհասարակ մարդիկ, միմեանց տես-
նելիս՝ բարեւում են, որ բաժանվում է՝ չորս կարգ.— Առաւօ-
տեանը պատահելիս, աջակցելով ասում են ԲԱՐԻ ԼՈՅՍ: Օրուայ
մէջ պատահելիս, ասում են՝ ԲԱՐԵՒ ԶԵԶ—ԲԱՐԻ՝ ՅԱԶՈՂՈՒՄ:
Նրեկոյեան միջոցը՝ ասում են՝—ԲԱՐԻ՝ ՆՐԵԿՈՑ:

Նկեղեցիից դուրս գալուս ասում են՝ ՈՂՈՐՄԻ ԱՍՏՈՒԱԾ,—
Իսկ հանդէպի անձինքը՝ պատասխանում են, ՈՂՈՐՄԻ ՆՆՈՂԱՅԴ:

ԱՌԱԾ: Ամսուսան փուշը՝ չմեռան նուշը:



ՁԻ, ԹՈՉՈՒՆ, ՁՈՒԿՐ, ՓԻՂ, ԱՂՈՒԷՍ, ՍՈՒՆԻ.

Ձուկը լինում է լճերի, գետերի և ծովերի մէջ, ձմեռը
ձկները մտնում են քարերի տակ: Ձրկան վաճառականութիւնը
երևելի առևտուրներից մէկն է, բացի իրան միտը՝ տալիս է
մեզ և խաւար: Ձուկը տալիս է խաւար՝ իսկ թռչունը բե-
րում է ձու: Խաւարից լինում են ձկներ՝ իսկ ձուերից ձտեր:
Փիղը, ամենամեծ անասունն է երկրիս վերայ, շատ խել քով է,
ու հնարագէտ է կուռի մէջ, և շուտով կարելի է նորան ձե-
ռի հետ պահել: Հին ժամանակներումս գործ էին ածում ա-
րիւնահեղ պատերազմների մէջ, որ մեծ յաղթութիւններ էր
անում: Ձին ամենաօգտակար անասունն է՝ ընտանեկան սնտեսու-
թեան համար: Աղուէսի նման հնարագէտ անասուն չկայ: Ան-
տասների և զաշտերի մէջ դուրս են գալիս սունը:



Մ Ի Մ Ե Ա Ն Յ Ի Յ Հ Ն Ռ Ա Ն Ա Լ.

Միմեանց տեսութիւնից յետոյ՝ բարեւելով հեռանում են.
որ բաժանվում է՝ հինգ կարգ.—Միմեանց հետ բոլորովն տես-
նուելուց յետոյ՝ գնացողը ասում է, Ծառայութիւն Ձեզ:—Իսկ
մնացողը, ասում է՝ ծառայ Աստուծոյ: Նրբ կրկին անգամ պէտ-
քէ տեսութիւն դոյ՝ ասում է, Յտեսութիւն Ձեզ: Իսկ միւսը՝—
Յտեսութիւն: Նրեկոյեանը միմեանցից հեռանալիս, ասում են՝
Բարի գիշեր. Իսկ մնացողը՝—Լոյս բարին: Նրբ հեռու տեղ են
գնում, ասում են՝ Մնաք բարով: Իսկ մնացողը՝—Գնաք բա-
րով: Նրբ պատահում են բարի և ուրախութեան գործերի՝ ա-
սում են՝ Բարի լինի.—Բարի ժամի.—Շնորհաւոր լինի. Իսկ
միւսը՝ Շնորհակալ ենք ողջ մնաք:

ԱՌԱՅ: Հասկացողը՝ թե կէլեյն էլ իրասկանայ:


Հաներուկ: Բերան ունի, անասում,
ԺԹ. Բայց ուտում է յարածամ:



ՆԱՊՍՍԱԿ, ԵՂՆԻԿ, ՈՒՂՏ, ՃՍՆՃ, ԼՈՐԴՈՒ, ՅԶ, ԿԱՐԻՃ, ԿԸՂԳ-
ՂԻԿ, ԲԶԷԶ, ՍԻՐԱՄԱՐԳ, ԱԳՌՍԻ, ՍՈՒՍԿ, ԱՂԱՒՆԻ, ԿԱՅԼ, ՈՋՆԻ:

Նապաստակն է յոյժ ծիծաղաշարժ կենդանի: Նդնիկն է՝
զեղեցիկ անասուն, որ իւր զլխի վերայ եղջիւրներ ունի, որոնք
բաժանված են զարմանալի ճիւղերով: Աւղան է՝ զարհուրելի և
բարձր անասուն, է՝ նաև շատ թշնամի սխալալ: Ճանճն է՝ ան-
վնասակար արարած, բայց շոգ միջոցներին՝ անհանգիստ են
անում մարդկանց: Լորդուն է՝ օձանման մի սեռ, որ նորան մին-
չև չվնասեն՝ ինքը երբէք այլոց վնաս չի տալ: Իսկ օձն է՝
ընդհակառակը, որ միշտ մարդկանց կվնասի, մինչև անգամ
շատ ժամանակ աշխատէ կթուռուորն՝ որ խելոյն կմեռնի:—
ուստի՝ պիտոյ է օձերից հեռու մնալ և գզոյշ լինել այգիներ-
բում: Կարիճը, է՝ նմանապէս խայթող վատթար կենդանի թէև
շատ փոքրն է դրութիւնը միշտ վնասատու և թիւնալի: Կընդ-
ղեկը, է՝ անմեղ կենդանի: Բզէզն է՝ ուրախացուցիչ երեխայոց:

Սիրամարգն՝ է՝ շատ հիանալի արարած, որի փեղուրները ըզ-
մայլեցնում են մարդկանց ուշադրութիւնը: Սղաւը, անպի-
տան ձոյն ունէ: Սոխակը պատուական թռչնիկ է: Սղաւնին
ամենամիամիտ թռչունն է: Գայլը, է՝ վնասակար պատառոյ
զազան: Ազնին է փշա կենդանի, զուխը միշտ քաշած սպա-
նում է օձերին և ուտում է:



ԳԻՒԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅՔ.

Գութան. Տրմուղ. Մարկոս. Շամբարակ.
Բնասէն. Չեիչ. Լչ. Թուր. Կնկուխ. Երօր.
Գերանդի. Մանգաղ. Խոփ. Բրիչ. Երեկժանի.
Բահ. Թիակ. Մաղ. Սայլ. Բաղ. Երասան.
Եռանցք. Խարազան. Հունճք. Փոցղ. Տրմուխ.
Հեծանոց. Լուծ. Խոթան. Կամ. Բանօզի:

ԱՌԱՅ: Ա.Ե.ն, խաղը խաղային: Գայ սարի սճիւլը:

Հաներուկ: Ի.

Աշխարհիս մէջ կան եղբարք, Իրանը այսպէս միամիտ,
Որ միմեանց են ստեղծք. Հեռու ընկած ապրում են.
Թէ բնութեամբք, թէ գործովք՝ Բայց սրտերն են միախիտ՝
Ափսօս որ չեն սիրելիք: Անյայտ միմեանց եղբարք են:

Ս Ա Ռ Ո Յ Ց .

Չմեռուան ցուրտ միջոցներումը, մարդիկ ընդարձակ սեղում պատրաստում են մեծ աւազաններ, որոնց մէջ լցնում են ջուր. և այնպէս մնում են մինչև պարզկայ գիշերներն, որ սաստիկ ցրտից՝ սկսում են ամբողջ աւազանները սառել. որոնք յետոյ ջարդում են և մեծ մեծ կտորներով տանում են ու ածում գեանի մէջ փորում տան մէջ. որին ասում ենք, ՍԱՌՑԱՏՈՒՆ. և այնպէս լցրած փակում են դուռը և պահում են մինչև ամառը:—Նրբ որ գալիս է ամառը, սկսում է շոգը, նոքա բաց են անում սառցատունը՝ և սկսում են ծախել:

Ք Ն Ա Կ Ա Ն Դ Ի Բ Ք .

Նրկիր, Դաշա, Լնտառ, Լշուր, Սար, Բլրիկ, Ժայռ, Լպառած, Լնձառ, Քարանձառ, Քարափ, Չոր, Ծործոր, Մացառ, Մացառախիտ, Քարակարկառ, Քարածերպ, Քարածայռ, Քարածիռ, Պարելս, Սարակ, Սոր, Սայռ, Սեպ, Վէճ, Մորարա, Կարկառ, Խրամ, Խիճ, Դար, Փոս, Դարելիք, Դարահոս, Հեղեղատ:

Հ Ա Ր Յ Ե Ր .

Ի՞նչ պէշ էն լինում գայլերը... որպէշ էն լինում եղնիները... Ի՞նչպէս հո՛ւ է սիրամարգէլ... Ի՞նչ էրանի է հարկաւոր ուղար... և Ի՞նչպէս անասուն է նա... Գիւղացի էրբէ էն հանգիստ լինում... և էրբէ էն աշխատում... Ի՞նչ էն անում մանգաղով... Ի՞նչ էն գործում արօրով... Գիւղացի սայլով Ի՞նչ էն անում...:

ԱՌԱԾ: Մինչև խելօքի հարածէլը՝ գիծը երես պշին հարսանիք արեց:




ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԻՔՆԵՐԸ .

Նայիր սիրելի եղբայր, դէպի երկինքը, և տես որ մութ գիշերը ի՞նչպէս լուսաւորել են անթիւ աստեղները, ինչպէս ցերեկը լուսափայլում է արեգակը:—Տեսնում ես դաշտերի, այգիների և պարտեզների մէջ ծաղկած և կանաչած անհամար ծաղիկները և պտուղները:—Ի՞նչպէս անուշ հոտեր են փչում մեղմ քամիների հետ, որ մարդու սիրտ չի կամենում հեռանալ այս տեղից, նայիր Սրամ, և տես ի՞նչ մաքուր և պարզ աղբիւր է այստեղ: Ար մարդիս սիրտը փառաւորվում է, անսթուգունները ի՞նչ սիրուն քաղցր ձայներով երգում են ու ծրլվում. տես ինչպէս գառները արածում են և մկրկում: Տես որքան խաղողի ճ՛թեր են կախում իրենց վազերից որ վառվում է արեգակի նման: Ահա՛ այս բոլոր բարիքը Աստուած ստեղծեց. որ մեր ամենագթաւատ Արարիչ Հայրն է, որ մենք ինդանք, ուրախանանք և օրհնենք նորա անունը, փառք տալով այժմ, յաւիտեանս ու յաւիտենից ամէն:

Ն Բ Կ Ի Ն Բ.

Նրկինք, Ամբ, Աստեղք, Անձրե, Հեղեղ, Չին, Կարկուտ, Ծիածան—Աղեղն—Կանաչ կարմիր, Կայծակն, Երեգակն, Մբրիկ, Հողմ, Երև:



ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ.

Աշտի աչքերը երեկուանից ցաւում է, այսօր առաւել վատ է. միշտ վարժապետը նորան ասում էր թէ «կուացած դաս մի սերտիլ: այլ դուխդ բարձր պահի.» բայց նա չէր լըսում: ուստի և փնասուեցաւ:

ԱՌԱՄ: Ինչպէս կամենումես քեզ պարտէն՝ նոյնպէս եւ պարտւիր դու աշտից:

- | | |
|---------------------|---------------------|
| Մաստիկ լոյսը՝ | Մաստիկ աշխատելը՝ |
| Աչքը կը կուրացնէ, | Մարդիս կը յոգնեցնէ, |
| Մաստիկ ձայնը՝ | Ազան ուտելը՝ |
| Ականջը կը խուլացնէ: | Մտամոքսը կ'փնասէ: |



Կ Ո Կ Ո Մ.

Նրեկ, ես և իմ քոյր նրանեակը գնացինք հայրիկիս հետ մեր այգին. հայրս մեզ շատ տեղեր ման ածելուց յետոյ՝ ցոյց տուեց զանազան բոյսեր և ծառեր. յետոյ տարաւ վարդենիների մօտ, ցոյց տուեց վարդի սիրուն կոկոմները և ասաց «տեսնո՞ւմէք զլաւակներս այս կոկոմները, որ իրենց փոքրիկ ծառի թրփերի մէջ մնում են, մինչև որ բացուին և իրանց վարդենուն անուշ հոտ բուրեն. տեսէ՞ք դառնուկներ որ ինչպէս վարդենին սիրում է իւր կոկոմները՝ ծնողքը ևս, փայփայում են իրանց զլաւակները, դո՛ւք էք մեր կոկոմները իսկ մենք՝ ձեր վարդենիքը. որ ժամանակին պիտի բացուէք և ձեր բարի դործերով պիտի մեզ անուշ հոտ տաք»:

Ձ Ո Ւ Ր.

Առուաջուր, աղբիւր, գետ, լիճ, ծով, ջրհոր, ճահիճ, ահուճք: Ովկիանոս, գետակ:

Հ Ա Ն Բ Ն Ր.

Քարահանք, Ոսկեհանք, Սնդկահանք, Հողահանք, Աղահանք, Ածխահանք, Պղնձահանք, Անագահանք, Երկաթահանք, Ծրծմբահանք, Արծաթահանք:

Գ Ա Ր Բ Ի Ն.

Գարբինը, բցում է երկաթը կրակի մէջ և թողնում է մինչև որ բոլորովին կարմրի, յետոյ սկսում է հանել կրակի միջից և վեր է առնում մուրճը ու շտապելով ծեծում է. որից շինում է զանազան երկաթեայ բաներ. — բաները մաքրացնելու համար սկսում է խորտոցել գարբինը:

ԱՌԱՄ: Ծեծի՛ր երջանէ, չանի որ պատ է:

Հաներով:
ԻԱ.

Ինքը սև է կամակոր,
Ոչ ոքի էլ չի լսում:
Բայց երբ յանկարծ կարմրում է,
Խոնարհվում է և փափկում:



Ս. ԵԿԵՂԵՑԻ—ՏԱՃԱՐ.

Եկեղեցի, Տաճար, Բեմ, Սեղան, Խորան, Գրքակալ, Աւազան, Խաչ, Խաչվառ, Սկիհ, Մաղզմայն, Բող, Մասնատուփ, Բուրվառ, Պատկերք, Գահ, Կանթեղ, Զահ, Բշոց, Աշտանակներ, Աւետարան, ձաշոց, Մաշտոց, Շարական, Ատենի, Խորհր-

դատեոր, Շուրջառ, Մաղաւարտ, Վակաս, Կերոն, Փորուբար, Շապիկ, Ուրար, Թււնոց, Բագպան, Դօտի, Կանքեռն, Թագ, Էմիփորոն Գաւազան.

Եկեղեցւոյ մէջ տեսնում ենք հետեւեալները.— ԲնՄ՝ որևասի Սեղան՝ որի վերայ պատարագ է մատուցանում քահանան: Խորան՝ որի մէջ զգեստաւորվում է քահանան. ուր և պահվում են զարդերը Տաճարի. նա ևս եկեղեցական Ս. գրքերը: Գրակալ—Գրքակալ՝ որի վերայ դնում են Ս. գրքեր կարդալու միջոցին: Աւազան՝ որի մէջ մկրտում են նորածնեալը: Աւետարան՝ որ եկեղեցւոյ մէջ միմիայն քահանայք և աւագ սարկաւազներն կրկարդան: ձաշոց՝ որ մեծ Ս. գիրք է, որ կարգում են զպիւրները և քահանաները: Մաշտոց՝ է փոքրիկ գիրք որ միմիայն քահանայք պիտի ունենան, որով կատարում են ժողովութեան ամենաընտիր գիրք՝ որ երգում են եկեղեցւոյ մէջ ամենայն օր: Ատենի ժամագիրք՝ որ միշտ զրուած է զբաղական վերայ որ օրուան ժամերգութիւնը կարդան և աղօթեն նորա վերայ: Խաչ՝ որ Ս. օրհնութիւն կարդալու միջոցին կարեն ձեռքը քահանայք և վարդապետք: Խաչվառ՝ որ զուրս են բերում զանազան հանդիսակատարութեանց մէջ: Շուրջառ՝ որ ծածկում են քահանայք սրբազնագործութեանց միջոցներում: Մաղաւարտ՝ և Վակաս՝ ունենում են զգեստաւորուած ժամանակը: Կերոն ասում ենք մեծ մոմերին, այնէ՛ Եւզաբերից մոմերին: Սկիհ՝ որի մէջ կատարվում է կենարար ՄԱՐՄԻՆ և ԱՐԻԻՆ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Սուրբ Հաղորդութիւնը: Մասնատուփ՝ որի մէջ պահվում են Սուրբ Հաղորդութիւնը: Բուրվառ՝ որի մէջ ծխում են խունկ և կնդրուկ: Պատկերք՝ որոնց յարգում ենք և պատվում են նոցա վերայ նայելով՝ երևակայութեամբ աղօթում ենք առ Աստուած, բարեխօս ունենալով իւր ընտրեալներին: Գահ՝ որի վերայ կրօնավի միմիայն թե-

մական Եպիսկոպոսը ժամասացութեան միջոցին: Կանթեղ՝ որի մէջ փռուած է ձէթով ճրագ: Աշտանակներ՝ որոց վերայ վառուած են մամեր, ըստ մեծի մասին պատարագի միջոցին: Քշոց՝ որով զգալի են անուամարդոյս սրտին Ս. Պատարագի ժամանակ:

Հ Ա Ր Յ Ե Ր .

Որքեղ էն շինում չէնքը... Խնչով էնք յեանց պեանում... Խնչով էնք շում մեք... Ե Խնչով էնք խօսում... Խնչով էնք շրջում... Երբ էնք քնում... Ինչ է ցերեկը չե՞ հարելի քնել... ուրեմն Խնչով էնք քնում...:

ՅՐՏԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ ՕԴՈՑ.

Ժըմակ, Յուրտ, Բուք, Սառնամանիք, Փոթորիկ, Սառն, Մառախլապատ, Հողմ՝ ցըրտային, Մ'ընդած, Պարզկայ:

ԱՌԱՄ: Ո՛վ որ եւր պարիւր էր քնել՝ հասէ եւր խօսը:

ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ ԱՍԵՆՕՐԵԱՅ ԺԱՍԱՍՏՈՒԹԻՒՆ:

Պատարագ. Տօնախմբութիւն. Թափոր. Մկրտութիւն. Չեռնադրութիւն. Դրօշմ. Օծումըն. Պսակ. Խոստովանութիւն. Լպաշխարութիւն. Հազորդութիւն. և այլն: Հանդիսաւոր օրերում վառում են բոլոր ջահերը:

ԲՐԻՍՏՈՍ միշտ զառնուկ երեխաներին էր սիրում:

ՍՊԱՍԱԻՈՐՔ ԵԿԵՂԵՑԻՈՑ:

Ժամկոչ—Ժամահար. Լուսարար. Տիրացու. Դպիր. Կիսաօարկաւագ. Սարկաւագ. Աւագ սարկաւագ. Նորընծայ—երեց—

Քահանայ. Երեցփոխ. Վարդապետ. Ծայրագոյն վարդապետ. Եպիսկոպոս. Արքեպիսկոպոս. Պատրիարք-Հայրապետ. Կաթողիկոս:



ՀԱՆԴԻՍԱԻՈՐ ՏՕՆԵՐ ՏԵՐՈՒՆԱԿԱՆՔ:

Սրբոյ Կուսին Աստուածածնայ Յղութիւնն. Աւետումն. Ծնունդն. և երեց ամաց ընծայումն. Ծնունդն Յիսուսի Քրիստոսի. Մկրտութիւնն, որև ասում են Զրօրհնէք: Տեառնընդառաջ: Ծաղկազարգ: Զատիկ, այն է Յարութիւնն Քրիստոսի: Համբարձումն: Հոգեզարուսն՝ որին ասում ենք և Պնտեկոստէ: Այլակերպութիւնն, այն է Վարդապետ: Վերափոխումն սրբոյ Կուսին Աստուածածնի: և Վերացումն Խաչի:

Հ Ա Ր Յ Ե Ր.

Ի՞նչ ժամանակ էն ծեծում երչաւը... Ի՞նչ էն ծեծում... աւանայ
չրախի յի՛նէ չէն ծեծել... Ինչո՞ւ համար... Ի՞նչ բաներ էն շինում եր-
չաւելոյ... Ի՞նչ բան էն շինում որդպաւելոյ... Ի՞նչ էն շինում պշնչեց...
Ի՞նչ պեղ էն շինում Գահանայ... Ի՞նչ պեղ էն շինում զարդապետ...:

ԱՌԱՄ: Մի հին բարեխմբ՝ լա՛ւ է երչու նոր բարեխմբերից:

Հանելուկ:
ԻՖ. Մարդիկ մի տեղ ժողովուած,
Ուրախ սրտովք զարդարուած,
Ջան ասում են ջան լըսում՝
Մերթ խմում են, մերթ պարում:

ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՏՕՆԵՐ ՍՐԲՈՅ.

Տօն սուրբ Յովհաննէս Մկրտչի: Տօնք մեր նախկին Լուսա-
ւորչացի՝ սրբոց, Թադէոսի և Բարդուղիմէոսի: Տօնք հօրն մերոյ
Լուսաւորչին երախտաւոր Սրբոյն Գրիգորի: Տօն սրբոյն էջմի-
ածնայ Մայր Աթոռին մերոյ: Տօն Հրեշտակապետացն: Տօնք
սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ: Տօն սր-
բոց Վարդանանց:

Նս մարդ եմ, ազգու Հայ եմ և Հայկի զաւակ. իսկ կը-
րօնքով հայ Լուսաւորչական եմ.—մկրտուած եմ սուրբ Աւա-
զանի մէջ, որով հետևող և հաւատացող եմ Յիսուսի Քրիստոսի.
ուստի կոչվում եմ Քրիստոնէայ: Ո՛վ որ չի մկրտուիլ նա քրիս-
տոննայ չէ: Բոլոր քրիստոնէից նոր տարին լինում է ձմեռը,
Յունվար ամսի մէկին. ինչպէս և մերը:

Հ Ա Ր Յ Ե Ր.

Ի՞նչ պեղ է շինում Եղիշտար... որպեղ է նստում Կաթուղի-
չար... որպիս Գոնի՛ օր է... Երբ էն անպարճաւ ճարպոյ անում...
շաբաթի մէջ որ օրերն էն պաս...:

ԱՌԱՄ: Ինչպէս Աստուած ճարդիմայ՝ այնպէս և Հայրն որդւոց:

Ա Ր Հ Ե Ս Տ Ա Ռ Ո Ր Ք.

- ՊԳՆՁԱԳՈՐԾՐ՝ շինում է պղնձից զանազան բաներ:
- ՀԻՌՈՆ՝ կտրում է, սղոցում է, սաշում է և շինում փայ-
տեղենից ամեն բաները:
- ԿՈՇԿԱԿԱՐԸ՝ կտրում է կոշիկներ:
- ՄՍԱԳՈՐԾՐ՝ մորթում է ոչխար, գառն, եզ, կով և այլն,
և ծախում է:
- ՈՍԿԵՐԻՁԸ՝ շինում է արծաթից և ոսկուց պատուական
բաներ:
- ԴԵՐՁԱԿԸ՝ ձևում է և կտրում է շորեր:
- ՁՆՈՍԳՈՐԾՐ՝ գործում է թելեղէնից, այն է՝ բրթից և
բամբակից ընտանեկան պիտանացու բաներ:
- ԱՍԵՂՆԱԳՈՐԾՐ՝ կտրում է սաղով զանազան պատկերներ,
ճառեր և տեսքեր:
- ԴԱՐԲԻՆԸ՝ երկաթից շինում է զանազան բաներ:
- ՁԿՆՈՐՍԸ՝ բռնում է ձկներ գետերից, լճերից և ծովերից:
- ՆԿՍՐԻՁԸ՝ իւր վրձինով նկարում է պատկերներ և բնու-
թեան տեսքեր:
- ՀՍՑԱԳՈՐԾՐ՝ թխում է հաց և ծախում:

Արջի սիրելին է՝ արծը եւ տանձը,
Իսկ Աղուսինն է՝ խաղողը:
Արագիլը՝ թշնամի է օճերին,
Իսկ Կատունն մկներին:

Ե Ր Ա Զ.

Մի մարդ տեսաւ երազում որ թէյ են տալիս բայց առանց շաքարի, իսկոյն գոռալով վեր թռաւ շաքար շաքար: Աստի միւս օրը, վեր առաւ քանի մի կտոր շաքար և քնեց, բայց այլ ևս թէյ չտուեցին, ուստի շաքարը մնալով քրտնքից ջուր դառաւ, որով շերտուեց կողները: Միւս օրը գնաց բաղնիք որ մաքրուի, երբուեց որ այլ ևս երազի չհաւատայ:

ԱՌԱՅ: Կերտնիք որդուդէ հոշո՞ կեծանայ նա ևս չեղ էր կերտնիք:

Ազգաների ժողովեց,
Մինը թուաւ մեր կողմը,
Նստեց նայեց մօտ տեղից՝
Առաւ պանրի կտորը:

ՀԱՅՈՑ ԵՒ ՀՈՒՄԱՅԵՑԻՈՅ ԱՄԻՍՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ.

| ՀԱՅՈՑ. | ՀՈՒՄԱՅԵՑԻՈՅ. |
|--------------------|----------------------|
| 1. Նաւասարդ 30 օր: | 1. Յունվար 31 օր: |
| 2. Հուի 30 օր: | 2. Փետրվար 28-29 օր: |
| 3. Սահմի 30 օր: | 3. Մարտ 31 օր: |
| 4. Տրէ 30 օր: | 4. Ապրիլ 30 օր: |
| 5. Քաղց 30 օր: | 5. Մայիս 31 օր: |
| 6. Սրաց 30 օր: | 6. Յունիս 30 օր: |
| 7. Մեհեկի 30 օր: | 7. Յուլիս 31 օր: |
| 8. Սրեգ 30 օր: | 8. Օգոստոս 31 օր: |
| 9. Ահեկան 30 օր: | 9. Սեպտեմբեր 30 օր: |
| 10. Մարերի 30 օր: | 10. Հոկտեմբեր 31 օր: |
| 11. Մարգաց 30 օր: | 11. Նոյեմբեր 30 օր: |
| 12. Հրտաից 30 օր: | 12. Դեկտեմբեր 31 օր: |
| 13. Աւելեաց 5-6: | |

ՀԱՅՈՑ ՏԱՐԵՄՈՒՏԸ.

Նաւասարդ ամսի մէկին մտնում ենք մեր ազգային թուականի նոր տարեմուտը, որին ասում ենք և կաղանդ, որ լինում է միշտ Օգոստոս ամսի մէջ: Ամեն մի Հայ՝ այս օրս պարտական է ուրախ լինել և զուարթ. միմեանց պէտքէ շնորհաւորեն ազգային նոր թուականը աշնպէս՝ ինչպէս կատարում ենք Փրկչական թուականի տարեմուտը, որ է Յունվարի մէկը: Մենք ապրում ենք Հայկական անուամբ, յիշում ենք Հայկ պապ Նահապետին և նորա որդիներին, ուրեմն և պիտի պահենք ու մեծարենք մեր Հայկական տարեմուտի թուականը:

Մենք կանք և ապրում ենք կրօնքով սրբոց Հարց և Լուսաւորչացն մերոց շնորհիւ Քրիստոնեայ, ուրեմն և պարտական ենք փառաւոր կերպով անցուցանել և Փրկչական տարեմուտը կաղանդը:

ԱՌԱՅ: Որքեշ Խոյ՝ աշնպէշ չոյս:

Մ Ա Ր Պ.

Նա մարդ եմ, թէ և դեռ այժմ փոքր եմ, նորա համար որ ինձ ունեմ աշնպէս հոգի և աշնպէս մարմին՝ ինչպէս մեծ մարդկանց: Թուշուններին երկու տոներ ունեն, որ միևնոյն ժամանակը և ձեռքերի տեղ է:

ՈՎ ԱՐԴԵՕՔ ԶՊԻՏԻ ԱՅԽԱՏԻ.

1. ԶԱՐՄԱՅՐԸ ՈՉԽԱՐԻ ՀԵՏ:

Արդեօք զՊիտի Այխասի ի ամենազուարթ սիրուն տուաօտ, որ արեգակը փայլում էր, և թռչունները ձէն ձէնի հետ քաղցրանուտդ երգում էին, Զարմայրի հայրը և մայրը ուղարկեցին նորուն ուսումնարան, որ նոր մտել էր ու թն տարաւ ան մէջ:

Բայց մանուկ Չարմայրը չէր կամենում ուսանել, այլ շատ սիրում էր խաղալ. ուստի մի տեղ կանգնեց՝ նայեց իւր չորս կողմը, և տեսաւ մի ոչխար, որ պարտիզումը խտրը բերնին ուտում էր, ասաց ոչխար, արի մի փոքր խաղանք միտեղ.— ոչխարը պատասխանեց՝ տո՛չ, ես միջոց չունեմ խաղալու, ինձ հարկաւոր է գնալ և կերակրել իմ գառները նա.

2. ԶԱՐՄԱՅՐԸ ՀԱԻԻ ՀԵՏ:

Ըրամեց Չարմայրը, և գնաց մի քանի քայլ ու տեսաւ մի կատարով սիրուն հաւ, և ասաց այ հաւ, արի մի փոքր խաղայ ինձ հետ— պատասխանեց հաւը տո՛չ, ինձ միջոց չունիմ խաղալու, այլ ինձ հարկաւոր է գնալ և կերակուր գտնել իմ ճուռերի համար որ սոված չմնան:


3. ԶԱՐՄԱՅՐԸ ԾՐՏԻ ՀԵՏ:

Ըրամեց Չարմայրը, ու մտածելով գնում էր, յանկարծ տեսաւ մի ծիւղ որ բերնին բռնած էր քանի մի փափուկ խոտ. կանգնեց ու ասաց ծիւղ աղբեր կա՛ց, կա՛ց արի մի փոքր խաղայ ինձ հետ— Ծիւղը պատասխանեց, տո՛չ, ինձ միջոց չունիմ խաղալու, այլ ես պէտքէ ժողովեմ քանի մի փափուկ խոտ, փեղուր, բամբակ, և բուրբ, որ սրանցից շինեմ ինձ համար բոյն:

4. ԶԱՐՄԱՅՐԸ ԶԻՈՒ ՀԵՏ:


Ըմանուկ Չարմայրը տրամեց ու սկսեց գնալ, տեսաւ մի փոքրիկ ձի ու ասեց նորան տո՛ւչ սիրուն ձի ես, արի մի փոքր խաղանք— պատասխանեց ձին տո՛չ, ես միջոց չունիմ խաղալու, այլ ես պիտի գրնամ այգին որ պտուղները փողոց ասնեմ, ծախելու համար:

5. ԶԱՐՄԱՅՐԸ ԵՁԻ ՀԵՏ:



Արամեց մանուկը, և չգիտէր ո՛ւմ հետ խաղայ, տեսաւ մի չալ եղը, կանգնեց ու ասաց տո՛ւչ սիրուն եղն ես, արի ինձ հետ մի փոքր խաղայ— պատասխան տուեց եղն՝ տո՛ւչ խաղա՛լ անկարելի է, այլ իմ պարտք է վարել հողը, որի վերայ պէտքէ ցանեն ցորեն, եթէ ես չըվարեմ հողը՝ ի՞նչպե՛ղ պէտք է ցանեն հաց՝ իսկ եթէ հաց չըլենի ցանած, ուսելու բան չի լինիլ, ուրեմն պէտք է գնամ աշխատեմ քեզ համար հաց՝ որ ուտես:

6. ԶԱՐՄԱՅՐԸ ԳՊՐՈՑԻ ՄԷՁ:



Ամանուկ Չարմայրը սկսեց խոր տրամել բայց յետոյ մտածեց ու ժպտաց, ասելով ինքն իրեն տո՛չ ոք չի ուզում խաղալ ուրեմն ես ևս չպիտի ծախնամ, սկսեմ սովորել և աշխատել նա գնաց վարժատուն, և սկսեց ջանասէր լինիլ, վարժապետը զովեց նորան, որով և մանուկը շատ ուրախացաւ:

ՀԻՒՍԻ ՊԱՐԱԳԱՅՔ.

Ուրազ, Սղոց, Դուր, Խարտոց, Խիզար, Կացին, Հաղափ, Սեպ, Սոսինձ, Մուրձ, Պատուակ, Եգցան, Վերիչ, Տապար, Վանգակիչ, Յեսան, Յզկիչ, Վանտն, Իգմիր, Երզրհան, Գչիր, Լար, Ուղեցոյց:

Հ Ա Ր Յ Ե Ր.

Ե՛րբ է ընդհանուր բնութանէն յոր պարխն... Ե՛նչ էն անու՛մ ու-
րափոխ... Ե՛նչ էն անու՛մ պարապախու... Ե՛նչ էն հասար է ստիւնչը... այ-
սոր Ե՛նչ է...:

ԱՌԱՄ: Լա՛ւ է հասկացող ճարտի հետ քար կրել՝ քան ըն յիճարի հետ
փշաւ ուսել:

Առաւտտուայ լիս ծէքին՝
ծառկուտտուող մծտացաւ,
Ուշ դարձրինք կտկտոցին՝
Ականջներս քստացաւ:

ԿԱՐԻՃ ԵՒ ԿՐԻԱՅ.

Մի օր կարիճը, գնաց դաշար պաշար բերելու՝ փոքր մի-
ջոցից՝ յետ գտաւ իւր պաշարը և սկսեց վերադառնալ, երբ
հասաւ նա իւր բունը՝ տեսաւ, որ բաւտկանին անձրև է եկել
և իւր բունի առաջ փոքրիկ լճակ է դարձել, սկսեց փորձ փոր-
ձել—նա մտաւ ջրի ափը, բայց իսկոյն կորցրեց պաշարը. ուս-
տի դուրս եկաւ ու ջրի մօտ նստեց և մտածեց, տեսաւ յան-
կարձ մի կրիայ, որին քաղցրութեամբ բարեկեղաց յետոյ՝ խըն-
դրեց և աղաչեց որ իւր թևի վերայ աւնելով՝ անցկացնէ միւս
կողմը իւր բունին մօտ.—«Շատ բարի՛.» պատասխանեց կրիան,
«ե՛կ թևիս վերայ քեզ անցկացնեմ.» նստեց կարիճը, իսկ կրի-
ան՝ լողալով սկսեց իւր ճանապարհորդութիւնը, բայց ջրի մէջ-
տեղը չհասած՝ սկսեց կարիճը իւր խայթոցով խայթել, «Ե՛նչ
ես անում բարեկամ՝ ասեց կրիան. «ոչինչ» պատասխանեց կա-
րիճը, փոքր միջոցից յետոյ աւելի սաստիկ սկսեց իւր խայթո-
ցը, այստեղ կանգնեց կրիան և ասաց՝ «կամենում ես ինձ խայ-

թե՛ն բարեկամ՝ պատասխան տուեց կարիճը, «ո՛չ, ո՛չ, բարե-
կամ, ես չեմ խայթում, այլ՝ իմ բնականն եմ գործ գընում,
չառ գեղեցիկ, շա՛տ լաւ բարեկամ՝ պատասխանեց կրիան, եթէ
այդպէս՝ ուրեմն ես ևս, ահա՛ այսպէս իմ բնականը գործ կը-
գնեմ...» ասեց և իսկոյն մտաւ ջրի տակ և լողալով գնաց միւս
ափը, իսկ կարիճը ջրի երեսին տատանելով անյայտացաւ:

ԱՌԱՄ: Դոչը գոչեց գողացաւ՝ Աստուած վերեւ շարժուաւ:

ԱՆԴԱՄԱՋԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԻԱՅԻՆ. Բ.

Մարմին, Լնդամ, Ոսկր, Օճառ, Մսան,
Չիւ, Երակ, Շնչափող, Միս, Մըկան, Կա-
շի, Թաղանդ, Թեղ, Մաղ, Գանգուր:

ԱՆՉԴՈՅՆ ՈՐՍՈՐԴ.

Մի որսորդ տեսաւ հեռուից, որ թռչունները թառ են
եղել ծառերի ծէքին. շատ ուրախ ու զուարթ դէմք ստանա-
լուց յետոյ՝ որսորդը իսկոյն գնաց տուն, վեր առաւ հրացանը
և վազեց դէպի ծառերը. կանգնեց որսորդը ծառերի մօտ՝ և
բարձրացրեց հրացանի ոտը.—լաւ նշան բանեց թռչուններին,
և նոյն իսկ բողբոջեց, երբ կամենում էր արձակել հրացանը՝
և նոյն իսկ բողբոջեց, երբ կամենում էր արձակել հրացանը՝
յանկարձ անգիտութեամբ ոտըը զրեց մի սորսափելի իժ օձի
վերայ, որը՝ և իսկոյն առանց խնայելու խայթեց որսորդին.—
Որսորդը վեր ընկաւ մերձ ի մահ և ասաց, «ափսոս ինձ, որ
ես եկայ փոխանակ թռչուններին սպանելու՝ իմ անզգուշու-
թեամբը, ահա ես ինքս եմ մեռնում:»

Մ Ի Ջ Ո Յ.

Վայրկեան. Բոպէ. Ժամ. Օր. Գիշեր.
Օրագիշեր. Հարաթ. Ամիս. Տարի. Յիսնա-
մեակ. Դար:

Արագիշն է քարձրաթուի թոշունն եւ յոյժ թըշ-
նամի օձերի:

Բանալիքով ըսց են անում կողակցները:

Արժանատր մարդին սլատիւ են տալիս:

Բաղանիքում մարդիք լողանում են:

Ժիածանը—կանաչ—կարմիրը՝ երևում է անձ-
րեից յետոյ:

Ասագակին կ'ընենն եւ կտանենն քանդը:

Հ Ա Ր Յ Ե Ր.

Ի՞նչ է Կարգը և անէլ Կարիճը... արբէշ էն լինում էրեաները...
Ի՞նչ է Կարիճար արարդին... Ի՞նչ արարած է ծիծեռնաշիւ... Կո՛ւ սի-
րում էս նորան...:

ԱՌԱՄ: Երէ ձէլին սիրում էս՝ զԿոյշ Ծոյ որ երբէք չ'անպարտէս:

Ամբողջ աշխարհի մէջ, Մեծանում են ծառեր,

Ազատ բաց օդի մէջ, Նայում են աչքեր,

Ինչ բանի որ նայես՝ Կարգը լաւ բուրում է՝

Դու շատ պարզ կոնսնես, Սոխակը երգում է:

Սեղանը կանգնած է, Մեծակը կը ծում է,

Արևը փայլում է, Տե՛ս պատկերահանը՝

Քամին մեղմ փչում է, Նկարում է պատկեր,

Սպունգը ջրումն է: Դո՛ւ մանուկ, ուրախ լեր:

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ԱՅՈՏԸ.

Բոլոր մարդիկ պարտաւորին միշտ եկեղեցի դնալ.— Ես,
բացի հասարակ օրերից՝ ամեն կիրակնամօտի, կիրակի և սրբոյ
տօների ժամասացութիւններում միշտ լինում եմ. ահա՛ այսպէս
եմ աղօթում Աստուած իմ Արարիչ, աղաչում եմ իմ թո՛թով
լեզուովը, յաջողութիւնն տուր իմ ծնողաց, վարժապետաց և
հոգաբարձուաց. սո՛ւր մեզ բոլոր ընկերներիս սէր և միութիւն.
Ծաւալի՛ր քո շնորհաց լոյսը մեր մտքի մէջ որ ամօթով չմը-
նանք մեր ուսուցչաց մօտ. ժամանակ տուր մեզ Տէ՛ր որ բարի
պատգներ գործենք, պատուենք և սիրենք մեր ծնողացը, և
փառաբանենք Քո անունը: Աստուած իմ, ներողամտութեամբ
նայիր իմ մանկական հասակին և կատարիր իմ սրտի հայցու-
ածը, բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածին և սրբոյ հօրն
մերոյ Գրիգորի Լուսաւորչին և ամենայն Քո ընտրեալների.»

Ա.Ղ.ՕԹ.Ք ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐ ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ

Անկանիմք առաջի քոյ սուրբ Աստուածածին, և աղաչեմք
զանարատ զԿոյսդ, բարեխօսեա վասն անձանց մերոյ, և աղա-
չեա՛ զմիածին Որդիտ, փրկել զմեզ ՚ի փորձութենէ և յամե-
նայն վտանգից մերոյ,

ՄԱՐԴՈՅ ՀԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆԸ.

Տեսանելիք. Հոտտտելիք. Ճաշակելիք. Լսելիք. Շոշափելիք.

Աչքերով տեսնում ենք ամենայն բան: Բիւլ—Պին՝ որով հոտ
ենք առնում ամենայն բանից: Բերան՝ որով խմում ենք, ուտում
ենք և ճաշակում մեր սրտի սիրածը: Սկանջներով լսում ենք
ամենայն ձայն և խօսուածք: Զեռուլ և արուլ շոշափում ենք
շատ բաներ:

Հ Ա Ր Յ Ե Ր.

Ի՞նչ ասէք է շինուած սպանութիւն... ծո՞ղի է մեծ լի է գեղն... ստի՞ն է մեծ լի է բլուր... որ է գիշեր Կանի՞ ծո՞ղի է... Ինչո՞ւ լին զանապան- լու՞մ Կառնի՞ն ու գիւղն... Կարի՞ն Կանի՞ շա՞քալ ունի...:

Ա.Ռ.Ա.Ծ: Պահիր Կաշը սեօ օրուայ Կամար:

ԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ Ա. և Բ.

Աշխարհիս մէջ, առաջին կարգը՝ և քաղաքավարութեան տեղը, բռնում է՝ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆԸ և ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ. որոնք մարդոյս երջանկաւէտ լինելու պատճառ կլինեն, պարտական ենք ուրիմն մենք, բոլոր ընկերներով որ այս երկու անգին զան- ձը մանկութեան միջոցներիս գրկենք, որ յետոյ ամենայն բա- րիք կարողանանք գործելու, որով միշտ բախտաւոր կլինինք մեր կենաց մէջ: Երկրորդ՝ մեզ պիտոյ է, և հարկաւոր է վարուել ամենայն մարդի հետ քաղաքավարի. աղքատին և հարուստին մի կերպ պէտք է պատուենք՝ որ նոքա տեսնելով մեր պարկեշ- տութիւնը՝ սիրեն, գովեն, և պատուեն մեզ ամենայն տեղ:

Մէկ օր պատահեց Սոկրատես իմաստունին մի հարուստ մարդ՝ որ կարգաւ չգիտէր. վրէն լաւ նայելուց յետոյ՝ ասեց, ւահա՛ ոսկեղէն անասուն, Այս իմաստունին մէկը հարցրեց՝ «Թէ՛ աշխարհիս վերայ ո՞ր մարդն է գեղեցիկ.— Պատասխանեց կրթուած մարդը:»

Գանձապետի մտա լինում են պատրաստի դրամ: Ծգնութիւն հարկաւոր է աղքատներին և անամկներին: Մարգարիտը թանգազին բան է:




Աշտարակ անունով Հայոց գիւղ կայ Երևանի նահանգումը, շատ հարուստ և մեծ գիւղ է. այս գիւղիցը դուրս են եկել խելօք, անուանի և ուսումնական մարդիկ. այստեղից էր և մեր ՆԵՐՍԷՍ Ե. երջանկայիշատակ ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հ Ա Ր Յ Ե Ր.

Ահա՛ Կեղ Տեգրան՝ 100 արդօս — ընկոյզ... Կամարիս աս ուղի՞ն է... այժմ 10 ասէք Բոթին արա՛ անն մէկին 8 արդօս... Ի՞նչ ասոյ ասէք... այժմ այս Բոթին արա՛ 5 ասէք... Ինչո՞ւ է ուղի՞ն է...:

Առաջի տանողին՝ եղի քսպողին.
Առաջի խաղ անողին՝ եղի չուռ ուղողին:



ձի՞ժը քաշեցի տնս՝ վեգիւրը շարի և հե-
ռացի. խաղում ենք:

Կ Ր Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Գ.

Մտալաշ եղբայրներ, մենք պէտք է խօսենք միշտ քաղցր բարի և օգտաւէտ խօսքեր, որ մեր միւս ընկերները մեզ տեսնելով՝ բարի օրինակ վեր առնեն, որ խելօք տղերք լինին:

ԽԱԿ ՊՏՈՒՆ ՈՒՏԵԼԸ.

Խակ պաղին ասում ենք ցոգոյակ: Ցոգոյակ ուտելը շատ վնաս է, տտամները առնում է և հաց չէ կարողանում ուտել: Երեկ մեր ընկեր Տիգրանը մօրից ծածուկ իրանց պարաիզումը կերել էր. և նորանից էլ սկսեցանք ասել, տեսնու՞մէք տղերք, ահա՛ այս օր էլ վարժատուն չի եկել ևս դնոցի տեսայ նորան, խելճը շատ աքթութիւն ունէր, սիրան էլ խառնում էր. հասցել մինչև մի ամիս խելքը դուրսը գաց. — ևս, ուտում եմ այն ժամանակը՝ երբ բոլորովին պտուղ է լինում: Ա՛վ խելօք է՛ նա բոլորովին ցոգոյակ չի ուտիլ:

Հ Ա Ր Յ Ե Ր.

Ի՞նչ էր իրել Տիգրանը... Ի՞նչ է պարտեղ նա այդ ուտելով... Ի՞նչ էս ուտում գո... Խելճը ի՞նչ էն ուտել... Էրբ էս աղջկո՞ւմ...

Ա Ղ Օ Թ Ք.

- Ուսուցիչ Աղօթք գիտե՞ս:
- Մանուկ Այո՛ գիտեմ մի քանի աղօթքներ, որոնցից գլխաւորը՝ ինչպէս պատմել է մայրս, «Տէրունական աղօթքն է, որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ինքն աւանդեց մեզ: Ուրեմն ի՞նչ ևս աղօթում:
- Ուսուց. Աղօթում եմ, նախ՝ որ Աստուած իմ ծնողացս երկար կեանք տայ և բարի օրեր, որ ինձ միշտ այսպէս ուրախ և ուսման մէջ պահեն:

- Ուսուց. Յետոյ ի՞նչ կաղթես:
- Ման. Աղօթում եմ, որ Աստուած ամենայն մարդկանց բարի տայ: Աղօթում եմ որ իմ բարեկամներին հասուցումն շնորհէ: Աղօթում եմ, որ գոռոզ և հպարտ մարդիկը՝ մեղմանան և խոնարհին միմեանց: Աղօթում եմ իմ վարժապետաց առողջութեան համար, որ առանց նորանց մենք ոչինչ չենք կարող իմանալ: Մի՛նս, ծաղկե՛ս և ծերանաս: Ի՞նչ կաղթես աշխարհի համար:
- Ուսուց. Աղօթում եմ, որ մարդիկ միմեանց օրերն և հեռանան նախանձից: Աղօթում եմ, բանդարկելոց ազատութիւն: Աղօթում եմ հիւանդաց առողջութիւն: Աղօթում եմ հրկրին պարարտութիւն: Աղօթում եմ, որ հարուստքը, չհարստահարեն սնանկին: Աղօթում եմ, որ մարդիկ ողորմեն աղքատին: Աղօթում եմ, որ անկարգ երիտասարդները՝ կարգաւորուեն: Աղօթում եմ, որ աշխարհիցս մարդասպանութիւնը վերանայ: Աղօթում եմ որ զիւղացին և քաղաքացին միմիանց հաւասար եղբայր ճանաչեն:
- Ուսուց. Աստուած օրհնէ՛ քեզ:

ԱՌԱՄ: Ծշմարտութիւնը խօսողը՝ արդարութիւն էր յայտնէ:

Հանելուկ: Ինքը ծլած ծաղիկ է,
Ի՞նչ. Յանկարծ տեսար նա փոխվեց,
Ձեռ ևս տալիս մարմին է՝
Մէկէլ տեսար կանանչեց:

ԿԵՏԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ.

Բուժ՝ Ստորակէտ, Միջակէտ. Վերջակէտ: Մակակէտ՝ Ենչա-կոչական՝ Պարչկ՝ Երկար Ննթամնոյ - Պատիւ — Փակագիծ () Կա իճք e ՝ Զակիրտ ՝ Նշանատալ * Կեսեր...:

ԱՍՏՈՒՄՈՅ ԲԱՐԻՔՆԵՐԻՑ՝ ԶՈՒՐ ԵՒ ԱՆՁՐԵՒՒ.

Աստուած վեց օրումը, ոչինչ բանից ստեղծեց աշխարհը: Մարդկանց ստեղծել է Աստուած և տուէլ է բանական հասկացողութիւն և անմահ հոգի. ամբողջ աշխարհը և նորա մէջ բոլորը՝ Աստուած ստեղծել է մարդի համար:

Աշխարհիս մէջ կան՝ ժժմունք, միջիմք, սողունք, թռչունք, անասունք, զազանք և վերջապէս մարդ: Մարդին նրմանութիւն ունի կապիկը շատ մասերով և բնութեամբ: Թութակ անունով թռչունը, համարեայ մարդոյ նման կարտասանի:

Աշխարհը բաղկանում է հողեց և ջրեց. ջուրը երեք անգամ շատ է հողեց: Աշխարհս բաժանվում է չորս մասը:— Ա՛յն կողմից՝ որ դուրս է գալիս Արևը՝ ստում ենք ԱՐԵՒԵՆՔ: Իսկ նորա հակառակ կողմն է՝ ուր մայր է մտնում արևը ԱՐԵՒՄՈՒՏՔ: Աջ կողմը արևելքից՝ ուր փչում է տապախառը քամի անուանում ենք ՀԱՐԱԻ: Իսկ ձախ կողմից՝ ուր փչում է սառը քամի անուանում ենք՝ ՀԻՄԻՍ: Ես երբ որ երեսս անուամեմ Աղօթարանը՝ այն է, արևի դուրս գալու կողմը, լինում է Արևելք. իսկ քամակս է՝ Արևմուտք, Աջու կուռս է Հարաւ. իսկ Ձախը Հիւսիս:

Հողը տաքանում է և փայլում՝ արևից: Մեծ քարերով շինում են հիմը, միջակ քարերով շինում են աներ և պատեր. իսկ փոքրիկ քարերից պատրաստում են սարայատակ:

Քարերը բաժանվում են շատ տեսակ, որոնցից ահա՛ մի քանիսը. Աեռ, Քաւանկ, Փուխր, Սև, Կարմիր, Զէչաքար, Յասպիս, Մարմար, Պորփիւր, և ըն:

Հաց ուտելու ամանիքը լինումեն Յաղճապակից:

Ես, յորանչելու— արշկոտալու միջոցին միշտ ձեռքս բերնիս եմ դնում, որ անկարգ բերանս բաց չլինի:

ԱՌԱՄ: Աժէն պէտք է: Երանի նորան որ իջնարդայ և կարգաչածը իջ հասկանայ:

ԱՍՏՈՒՄՈՅ ԲԱՐԻՔՆԵՐԻՑ՝ ԶՈՒՐ ԵՒ ԱՆՁՐԵՒՒ.

Ջուրը, այնպիսի մի գերազանց հարկաւոր բան է՝ որ առանց նորան անկարելի է մընալ:— Առհասարակ աշխարհիս մէջ, մարդիկ, անասունք, զազանք, թռչունք, սողունք և այլն, աննկարագրելի հարկաւորութիւն ունին ջրի: Ահա՛ ինչպէս բանական և անբան արարածք՝ նոյնպէս և ամենայն բոյսք, սկսեալ՝ տունկ, ծառ, խոտ, բանջար, և այլն սպրում են և մեծանում ջրով. եթէ չլինի ջուրը՝ չենք գանիլ և ոչ մի բան, բոլորը չորացած՝ և անհետացած կլինեն աշխարհիցս: Ահա՛ այսպէս և առանց անձրևի չենք կարող մնալ. նորա համար, որ եթէ չլինի անձրև՝ չենք ունենալ ցորեն. — եթէ չլինի ցորէն՝ սով կլինի աշխարհիս մէջ. իսկ եթէ սով՝ ապա ուրեմն և մահ: Գործեալ, եթէ չլինի անձրև՝ չեն աճիլ և չեն մեծանալ անտառները, եթէ չլինեն անտառները՝ չենք ունենալ վառելու փայտ. եթէ չկայ վառելու փայտ՝ ուրեմն ձմեռները մենք կժրսենք և կհիւանդանանք. իսկ եթէ ցրտից հիւանդանանք և հնար չլինի տաքանալու՝ ահա՛ ուրեմն և մահ:

Ս Ր Ե Ր.

Դանակ. Դաշնակ. Դաշոյն. Խարք. Դահնայ. Դագուր. Դալապր. Աշտէ. Երկսայր. Գեղարգ. Միասայր. Շեշտ. Աիզակ. Աեա. Սաաուր. Սակր. Սայր. Սայրասուր. Սիկարեան. Սլաք. Սուր. Թուր. Սուին. Տեգ. Վաղակաւոր. Փքին:

ԱՌԱՄ: Ո՛րքան ծանօթներ ունենայ հարդ՝ դարչեալ հարչուոր է մի բարեխաճ:

Փ Ա Յ Տ.

Փայտերը կտրում են անտառներից և բերում են քաղաքները ծախելու: Փայտերը գործ են ածում հեռեեալ գլխաւոր բաների համար, այն է՝ երկար և միջակ հաստ և ուղիղ փայտերը գործ են ածում առաստաղները—կտուրները ծածկելու համար. որին ասում ենք ԳեթԱն: Երկար, շատ հաստ՝ և ուղիղ պինդ փայտերը գործ են ածում շինութեանց համար, այն է՝ դռներ, լուսամուտներ, պահարաններ և այլն: Կակ տանահաստ և պինդ դերանները, գործ են ածում սեան համար: Բայց ծուռ ու մուռ փայտերը անտառներումը կտորում են ձղում, ու բերում են փաճառում փտեկիքների համար. որին ասում ենք՝ ՅԱԽ: Երանը՝ որ ինքնիրեն արեւից ձաքում է ըսկում է այսպէս, չըթ, չըթ, չըթ չըթալ: Ծախողները շինում են ամենահաստ դերանից:

Ն Ա Ր Յ Ե Ր.

Մարդիկ է՞նչ դանաղանուլի են ունին մեա հենդանիներէ... ո՞վ որու է բանախանուլի են... Ինչ է՞ համար... ո՞վ է ճարտար... ո՞վ է ճարտար է ճարտար նման արդասանի... ո՞վ է էն էն... ո՞վ է էն էն...:

Հանելուկ: Կայ մի տեսակ մեծ ու փոքր, —
Ի՞նչ. Ընտանեաց մէջ անասուն,
Տիրոջ պահող, այլոց խայթոյ՝
են նոքա միշտ հաստասուն:

ԱՌԱԾ: Գեղեցիկութիւնը՝ հեռուի ծուռի է,
Ինչ աստիճանութիւնը՝ նորա պարու է:

ԱՍՏՈՒՍԾ ԱՏԵՂԾԵՑ ՄԱՐԴԿՍՅԻՆ ԱԶԳԸ:

Աստուած բոլոր բարիքները ստեղծեց և կարգաւորեց, յետոյ տեսաւ որ ամենայն բան պատրաստ է, ասաց՝ հարկաւոր է որ բնին նոցա և տիրապետող. ուստի առաւ ձեռքը հող՝ փչեց և տուեց ոսկր, մարմին, անմահ հոգի և բանականութեան հոսկացողութիւն. ասելով՝ «ահա՛ բոլոր բարիքները քեզ համար, տիրապետի՛ր և կառաւարի՛ր այս ամենին» և անուանեց Ադամ: Յետոյ կանգ առաւ, նայեց իւր չորս կողմը և տեսաւ, որ ամեն անբան արարածք ուրախանում են իւրեանց ընկերներովը, իսկ բանական մարդը՝ թմրած է իւր միայնութեամբ. ուստի առաւ Ադամի կողքը ոսկր, փչեց նորան և ստեղծեց ընկեր. այն է՝ կին, տուեց նոյնպէս մարմին, անմահ հոգի և բանականութիւն, ու անուանեց Եւայ: Արթնացաւ Ադամ և զարմանալով ուրախացաւ, երբ տեսաւ յանկարծ իւր մօտ նրստած քնքոյշ ընկեր ասելով՝ «ահա՛ սորա մարմինը իմ մարմինիցն է՝ և ոսկրն իմ ոսկրիցը»: Տեսաւ Աստուած սոցա միմեանց սէրը և ասաց՝ ուրեմն աճեցէ՛ք և բազմացարո՛ւք և լցրէ՛ք երկիրը ձեր պտուղներով: ասաց և հանդիսա առաւ Աստուած: Ահա՛ այսպէս Աստուծոյ հրամանովը ծնեցին սրբիք և լցրեցին աշխարհի մէջ. որոնց պտուղները մենք ենք, ուստի պարտական ենք ամեն ժամանակ արթթ անել, փառք տալ և փառաբանել նորա Անուանը և անվերջ թաղաւորութեանը. ինչպէս այժմ, նոյնպէս և միշտ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Ն Ա Ր Յ Ե Ր.

Ճարտաց մէջ է՞րբ է շատ յախ գործ ածում... Ինչ ասում... Ինչ է էն ստիճան գործ ածում... Աստուած է՞րբ սրեղծեց ճարտար...:

ԱՌԱԾ: Լսելու՝ մշտ պարտաս էլ ի՛ր. հեղձաւորութիւնից շփոյն: Գորտեղ մանկական.

Փ Ո Ղ Ա Տ Ա Ր .

Մի փողաճար պատերազմի սաստիկ միջոցին, գերազանցեց իւր փողի ձայնը, որով աւելի գրգռելով՝ կատաղեցաւ պատերազմը. ուստի թշնամիներից մի քանիսը յանկարծ վրայ վազեցին ու գերի բռնելով՝ տարան փողաճարին. և երբ կամենում էին սպանել՝ ասաց նա, «ինչոր՞ւմ եմ ձեզ ինձ ներողութիւն տուէք, որովհետեւ ես իմ կենացս մէջ, բացի այս փողիցը ոչ մի սուր շեմ տուել ձեռքս և մարդ չեմ սպանել: պատասխանեցին թշնամիքը, այո՛ մենք ևս ինչ գորս համար է որ քեզ ենք կամենում սպանել. պատճառ՝ թէ և դու չէիր պատերազմում՝ բայց քո փող սծելովդ չափազանց զրգռում էիր այլոց կռուի մէջ. ուրեմն և մեռիր, որովհետեւ զո՛ւ ես բողբոխ պատճառը:

Հ Ա Ր Յ Ե Ր .

Ասորում, Նային ասալ սպեղծէյ ըէ Արա՞մն... էրբ սպեղծէյ Արամն... փողահարին սպանելի՞ն ըէ ոչ... Ասորում բանի՞ օրում ըս սպեղծէյ աշխարհը... ինչո՞վ էոք փր գրում... է՞նչ էն անում քանակ...:

Հանելուկ Ին.

- Ա. Մեւը փոքրիկ, բայց կոշիկ է մոխրագոյն,
Ողջ միատեղ քաղցր սիրով մնում են,
Բայց երբ կամիս՝ մօտենում են քեզ խակոյն՝
Սև երեսով քո աստղիգ փոփում են:
- Բ. Դու նայում ես երեսներին սևացած,
Բարկութիւնից սկսում ես ծեծել տալ—
Ծեծը կերան՝ աճա՛ խակոյն հող գառած՝
Սկսեց ջուր լինել և բերնում համ տալ:

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԲԵՐԴԻ .

Ակառ. Բերդ. Ամրոց. Միջնաբերդ. Դղնակ:

ԱՌԱՄ: Սագերից զԳրչայեր, էրբ Աղուհայ Հոյնի Կարողէ:

Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ք .

Թղթերի վերայ գրում ենք զիր, որին ասում ենք զրու-
թիւն. որ բաժանվում է հետևեալ մասերով:— Տոմսակ, Անդորրա-
զիր, Ստացազիր, Կուպակցազիր, Պայմանագիր, Հաշտագիր, Բա-
ժանագիր, Հաւատարմագիր, Վկայագիր, Երաւագիր, Փոխանակա-
գիր, Միջնորդական գրութիւնք. Այցելագիր, Նամակ, Խընդիրք,
Պատճէն, Յայտարարութիւն, Ձեկուցումն, Յուցակ, Մուրհակ:
Այս բոլոր գրութիւն գրողին ասում ենք, ԳՐԱԳԻՐ:

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ք .

Թղթերի վերայ ապփում են՝ դաստոտար, դասագիրք, գըր-
քոյկ, զիրք, Ժամագիրք, Լրագիր, Օրագիր, Ամսագիր, Շարա-
թաթերթ, Կիտամագիրթ, Տարեցոյց, Օրացոյց: Գրքեր տպո-
ղին ասում ենք Տպագրիչ: Տառեր շարողին ասում ենք զրաշար:
Մուր քսողին ասում ենք մրազարկ:

Հ Ա Ր Ա Ջ Ա Ց Հ Ա Ի Ա Տ Ա Ր Մ Ո Ւ Թ Ի Ն .

Մի մութ զիշեր, մի երևելի գող մատու մի պարունի տուն
կողրպտելու:— Տան շունը, որ հաւատարմութեամբ պահպանում
էր բակը՝ յանկարծ ընեց անկոչ հիւրի ոտների ձայնը հաշեց
խակոյն և աւազակի վերայ յարձակուեց, պատռտեց շորերը և
չթողեց որ տուն մանի: Աւազակը տեսաւ որ այս հաւատարիմ
գաղանը ձեռքից չի թողնում, ուստի, մի կտոր հաց տուեց նո-

բան. բայց շունը չնդունեց, այլ կատաղաբար ասաց լես չեմ կամենում քո հացը. որովհետև իմ տիրօջ թշնամին ես. եթէ ես ընդունեմ քո հացը՝ իմ տիրօջ բոլոր բաները դու կզոզանաս:

Հերոն՝ որով գործում են, թեւից՝ զանազան ըաներ:

Շուղ՝ որով գործում են դիւրին ըաներ:

Չազար՝ որով ածում են, շրշերի մէջ գինի, օղի եւ այլ ջրային ըաներ:

Խսիր՝ որը փոռում ենք գորգերի տակ:

ԱՌԱՄ: Ինչի՞ համար է եղբայրը՝ երբ սրբով բարեկամ չէ:

ԱՆՁԳՈՅՇ ՄԱՐԴ.

Մի քաղաքացի փողոցից անցնելու միջոցին՝ տեսաւ որ մատանիների քարեղեններ են ծախում: ուստի մտաացաւ ակնածախին և խնդրեց ցոյց տալ իրան Զմրուխտներ. բերեց ակնածախը և խնդրեց վաճառեց երեք հատ. առաւ քաղաքացին և զընաց տուն. կռչեց իւր ամուսնոյն և տալով նորան ուրախացրեց. ամուսինը յայտնելով իւր շնորհակալութիւնը փաթաթեց թըղթի մէջ և դրեց սեղանի վերայ. այրն գնաց ճեմելու: Անցաւ մի երկու ժամ, կրկին տուն եկաւ այրն առաւ հրացանը և կամեցաւ լցնել վառօտը և թուղթը լցնելուց յետոյ՝ վեր առաւ սեղանի վերայից փաթաթած թուղթն, կարծելով որ գնաակի կտորներ է և քցեց սուանց բացանելու հրացանի մէջ ու գնաց որս: Արտորգութիւնից յետ դարձաւ, և սկսում էր հանգստանալ երբ հարցրեց նորան կինը, «Թէ՞ ո՞ւր է զմրուխտները.» երբ լսեց այրն՝ սկսեց փոխել դիմաց գծազրութիւնը և զգալ իւր անզգու շութիւնը, որի համար երկուքը ևս ցաւեցին, որ ինչի՞ մարդս սուանց խոր մտածելու գործում է այն՝ որը իրան վնաս է բերում:

Հ Ա Ր Յ Ե Ր.

Հարգաւորեանն Էրեւանին ի՞նչ է... Կաշախոյն ի՞նչ ուրախանալի որ աղաք մտայնի զմրուխտները... ուրեմն ո՞վ է մեղաւոր, ինչը լեւ այրն... ինչի է՞նչ մեր գրեւորը ինչպե՞ս...:

ԱՌԱՄ: Տառն անգամ հարձիք՝ մի անգամ խօսիր:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹԻՒՆԸ.

Ընկերներ, երեկ մեր տունը մի նոր վարժապետ եկաւ հօրըս տեսութեան. նստեց, խօսեց հօրս հետ, յետոյ դարձաւ ինձ և ասաց, սիրելի գառնո՛ւկ, կարգա՛ մի քանի տող և ինձ պատմիր, ես իսկոյն կարդացի և սկսեցի պատմել, բայց չկարողացայ լաւ բացատրել յետոյ ասաց նա՝ «մանուկներ մեկ բաւական չէ՛ որ միմիայն լով կարդաք.— այլ հարկաւոր է ուղիղ հասկացողութեամբ և մտաուութեամբ հասկանաք կարդացածը. նորա համար որ, ո՞վ վատ է կարգում նորան ոչ ոք չէ պատմում, լա՛ւ կարգալը՝ մե՛ծ օգուտ է, նորանից ամենայն բարիք կարելի է սպասել»:

Հ Ա Ր Յ Ե Ր.

Այն վարժապետն ի՞նչպէս ճարտ էր... ի՞նչ էր նպատակը որ կարգաւ պատեց... ընկերներ երբ ենք վայելում... իսկ նախաճաշելը... ինչի՞ համար ենք խոսում...:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՇՏԵՐԸ.

Արծիաս. Երևել. Չիրաւ. Մոռու. Ոսխա. Ոսկիք. Աւարայրի:

ՈՒՇԱԿԻՐ ԵՒ ՄԱՔՐԱՍԵՐ ՍԵՔԸ.

Ես գրում եմ և կարդում առանց սխալների. կարգալու միջոցին երբէք մասներս չեմ տանում ատղերի վերայ, այլ ես սուր նայում եմ աչքով և կարգում եմ այն ձայնով՝ ինչ ձայնով որ խօսում եմ. ես միշտ պատվում եմ իմ ուսուցչին, այնպէս որ, դասիս ժամանակը կանգնում եմ, դուրս եմ տալիս և սկսում եմ պարզ արտասանութեամբ կարգալ, այսպէս եմ վարվում և դպրոցի հիւրերի հետ. որոնք կամենում են ինձնից կարգալ լսել. ես նստած սովորում եմ միմիայն իմ մենակ միջոցիս և ընկերներիս հետ: Աւերժքս չեմ կայցնում դրասեղանին և մէջքս չեմ կռայցնում, որ խիստ վնասէ ատում են. դուրսս պահում եմ բարձր, վերս պահում եմ ուղիղ և արձակ, վզնոցս կապում եմ թոյլ. քիթս միշտ մաքրած եմ պահում. բերանս բաց եմ անում չափաւոր. արշկոտալիս ձեռքս դնում եմ բերնիս. միշտ դէմքս լինում է ուրախ. եթէ ինձ վերայ բարկանում է ուսուցիչս, ես դարձեալ ուրախ եմ, որ ինձ սիրելով կամենում է ցոյց տալ իւր դժգոհութիւնը, որով ես սկսում եմ լինել աւելի զգաստ և զգոյշ. ձեռքերս, եղունկներս, բերանս և սկանջներս միշտ լուսնում եմ որ մաքուր լինեն: Մասներիս վերայ թանաքի բծեր չեն լինում:

ՀԱՅՈՑ ԱԶԳԸ.

Մենք, Հայերս առաջացել ենք մեր քաջ և հսկայ Պապ Հայկից. — Հայկն էլ Թորգոմից՝ իսկ Թորգոմն էլ Յարէթից, որ Նոյի երեք որդիներից մինն էր. և այս պատճառաւ կոչվում ենք Հայ. — մեր երկիրն էլ՝ ՀԱՅԱՍՏԱՆ: Մեզ ուրիշ ազգերը կոչում են՝ Արմեն. — իսկ մեր երկիրը՝ Արմենիայ, մեր քաջ Արամ թագաւորի անունով, որի ժամանակը Հայոց լեզուն շատ տարածուեց: Հայը, այսքան ժամանակ ապրելով աշխարհիս երեսին՝ տեսել և կրել է ամենայն բան, թափառել է և շրջել է

զանազան տեղեր, քաղաքներ և պետութիւններ, վերջապէս համարեայ չկայ աշխարհիս երեսին տեղ՝ որտեղ ժամած չլինէր Հայ: Մենք, Հայերս՝ աշխարհիս վերայ ամենահին և առաջին ուղղափառ Քրիստոնեայ ազգն ենք, որ Յիսուսի ՅԶ Թ. Աբգար Հայոց թագաւորը հաւատաց և ընդունեց ամենայն ջերմեռանդութեամբ Քրիստոսի Աստուածութիւնը, ուստի և ամեն միջոցներում, ամեն տեղ միշտ հաստատ ու պինդ մնացել են, մընում են ու կը մնան լոյս ուղղափառ հաւատի մէջ, որոնց թուան թուները մենք ենք, մեր ծնողաց յոյսը՝ մնում է մեզ վերայ, աշխատենք ուրեմն արժանաւոր մարդիկ լինել ժամանակին: Այժմ Հայերը ցրուած են ամեն տեղ զանազան օգտաւէտ գործերով. ամեն տեղ ևս ժառանգում են և ստանում ամենայն տեսակ յարգ, պատիւ և հռչակաւոր անուն:

- | | |
|-----------------|------------------|
| 1. Ուր որ գնաս, | 2. Ուրախ, զուարթ |
| Ուր որ լինիս՝ | Բաջ գործունեայ՝ |
| Հայ պատանի | Փայլեալ անուամբ |
| Գու կը տեսնես՝ | Հայ Հայունեայ: |

ՀԱՅՈՑ ՆՇԱՆԱԻՈՐ ՎԱՆՔԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ.

Սուրբ Էջմիածին. Յովհաննու վանք. Խորվերապ. Տաթևու վանք. Սևան. Ս. Սահփաննոս Նախավկայ. Ս. Գէորգ Մուղնի. Ս. Գեղարդայ վանք. Հառիժոյ վանք. Էջառիսայ վանք. Ս.Շուգր. Ս. Գոյիանէ. Ս. Հռիփսիմէ. Ս. Շողակաթ. Բջնոյ վանք. Սուրբ Սարգիս. Օշականայ Ս. Մեսրոպեայ վանք. Արմաշու վանք. Խնակնեան վանք. Նարեկայ վանք և այլն:

ՍՈՒՐ ՊԱՏԱՍԽԱՆ.

Մի մարդ հարցրեց մի ուսումնականի «Թէ՛ որ շատ «գիտուն ես՝ ինչո՞ւ ապա աղքատես...» պատասխանեց՝

«այո՛ շատ քան սովորեցի եւ շատ զխառնութիւն իմացայ,
«բայց արծաթսերութիւն չտրուցի»:

ՄԻՅՏ ՏՂԱՅ.

Մի իշխանի կին որդի չունենալով՝ միշտ տրտում էր, ուս-
տի մեծ փափագանօք միշտ աղօթում էր, — յանկարծ Աստուած
պարզեց նոցա մի զաւակ: Անցան մի քանի տարիք, երբ մա-
նուկը արդէն մտաւ չափաւոր հասակի մէջ, բայց բոլորովին
անմխտ: Յաւօք սրտիւ տեսանելով իշխանը, ատաց իւր կնօջը
ւրբ՝ որ շատ վաղուց տապտապում էիր և խնդրում էիր ու-
նենալ աղայ՝ ահաւասիկ գտար և ունեցար մինը՝ որ իւր բո-
լոր կեանքի մէջ լինելու է մշտ արջայ: Սիրելի ընկերներ՝ աշխա-
տներ որ մենք ևս մշտ արջայ չմնանք, այլ խելօք և հասկացող
մարդ դառնանք:

ԱՂՕԹԱՍԷՐ ԵՐԵԻԱՆ.

Ես աղօթք անելու ժամանակը, բոլորովին ուշ ու միտքս
մտքբում եմ և դառնում եմ դէպի մեր ստեղծող ԱՍՏՈՒԱԾ. ու
սկսում եմ ամենայն ջերմեանդութեամբ աղօթք անել. այն է՝
խօսել ԱՍՏՈՒԾՈՅ հետ. — Շնորհակալութիւն անել նորանից,
փա՛ռք ապա նորա անչափ և գթառատ ողորմութեանը, աղա-
չել, խնդրել, հայցել երկրպագութեամբ, որ ազատէ մեզ պա-
տահական և ամեն տեսակ փորձանքներից:

Հանելով:
Ի՞նչ.

Ինքը, տան տէրը չէ,
Բայց առանց նորա հրամանին՝
Մինչև անգամ տան տէրը,
Չէ կարող տուն գալ:

Ն Ե Ր Կ Ե Ր.

Նօթ, Մնդոյր, Սուտր, Արիկոն, Սան-
դիք, Տինարարիս, — Կինարարիս, Տորոն, Պաղ-
լէզ, Բորակ, Լըջասայ:

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՑ — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ ԵՒ ՀԱ-
ՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ ՄԻ ԲԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Աստուած ստեղծեց աշխարհս, և այն ամենայն բոլորը՝
ինչ որ կայ երկրագնդիս վերայ: Յետոյ մարդկային սեռը ըս-
տեղծեց և դրեց դրախտի մէջ: Ամենաառաջին մարդն էր Ադամ.
և ամենաառաջին կինն էր Եւայ: Ամենաառաջին մարդասպանն
էր՝ Կայէն, որին Աստուած սարսափելի կերպով անիծեց և
պատժեց: Ամենաառաջին սպանուածն էր՝ Աբէլ, որ Կայէնի եղ-
բայրն էր: Աշխարհիս մէջ ամենից շատ ապրեց Մաթուսաղայ:
Ամենից հաւատով, և Աստուծոյ հաճելի մարդն էր Հայրն
Աբրահամ: Ամենից ուժով մարդն էր երկրիս վերայ՝ Սամփսոն
որ առիւծին պատառեց: Ամենից խմաստունն էր՝ Սողոմոն, որ
տան և երկու տարեկան միջոցին թագաւոր նստեց:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ եկաւ աշ-
խարհ չարչարուեց, խաչուեց, մեռաւ, թաղեցաւ և յարեաւ ի
մեռելոց, մեզ դժոխքից փրկելու համար: Ամենաառաջին Քր-
իստոնեայ մարտիրոսն էր՝ Սուրբն Ստեփաննոս Նախավկայ:
Ամենաառաջին Քրիստոնեայ և անդրանիկ արքայն էր՝ Աբգար
Հայոց թագաւորը, Արշամայ որդին, որ հաւատաց և ընդու-
նեց ջերմեանդութեամբ Քրիստոսի Աստուածութիւնը ՅՁ թ.
ընդունելով Քրիստոսի Սուրբ Դաստառակի հրաշարծ պատ-

կերր: Ամենաառաջին Քրիստոնեայ աղքատասէր թագուհին էր՝ Աբգար թագաւորի կինն Հեղինէն, որ 42 թ. Երուսաղէմումը բաց արեց իւր դանձը և աղքատաց ու անանկաց բաժանեց: Հայաստանի ամենաառաջին լուսաւորիչն էր՝ Սուրբն Քաղէոս Առաքեալ, որին նահատակեց Սանատրուկ Հայոց թագաւորը, Աբգարի մահուանից յետոյ 48 կամ 49 թ: Ս. Քաղէոսից յետոյ՝ եկաւ Հայաստան և քարոզութիւն արեց Ս. Բարդուղիմէոս, որ և կոչուեցաւ «Հայաստանի քարոզիչ»: Մեր Հայաստանի երկրորդ Լուսաւորիչն էր՝ բազմաչարչար Սուրբն Գրիգոր, որ և անուանուեցաւ «Բազմերախտ Հայր Լուսաւորիչ Հայաստանեայցս աշխարհի»: Ս. Էջմիածինը շինուեցաւ 301 թ. երբ դուրս բերին Ս. Գրիգորին Խորվիրապից: Հայոց հաւատի և ազգայնութեան սրբազան սարսափելի պատերազմը եղև 451 թ. Յունիսի 2-ին. ուր՝ քաջն Վարդան Մամիկոնեան սպարապետն մեր, իւր անձնուրաց զօրքերով արիւնահեղ և սոսկալի պատերազմ տուեց Պարսից Յազկերտ կրակապաշտ թագաւորի հետ. որով նահատակուեցաւ Սուրբ քաջն ՎԱՐԴԱՆ 1036 շնաշխարհիկ զօրքերով: Հայաստանի վերջին նշոյն էր՝ Դաւիթ բէգ քաջ իշխանը որ 6 տարի Սիւնեաց երկիրը տիրապետելուց յետոյ՝ վախճանեցաւ խաղաղութեամբ. որ եղև մեծ կսկիծ և անպատմելի անբաղբութիւն Հայոց ազգի 1728 թ: Դաւիթ բէգին յաջորդեց Առիւծասիրտն Մխիթար, բայց ափսո՛ս որ շուտով վիջացրին ողորմելի քաջ նուիրականի կեանքը, նոյն իսկ դժոխարմատ Հայերը 1730 թ. որի պատճառն էր մեր տգիտութիւնը, նախանձը խեղը և ստելութիւնը, որոց փառաւոր հատուցումն շնորհեց Դաւրիժու Սամանցւոց Փաշէն կտրելով Մխիթարին սպանող Հայերի գլխները:

ՔԼՔԻՒԼՆ (Սոխովն) առ ՎԱՐԴՆ.

1. Ո՛չ քուն ունիս և ո՛չ դադար,
Խեղճ՝ իմ բլբլէլ պատուական.
Ողջ գիշերը պարտվում եմ՝
Սիրոյդ բացուիլը տեսնես:
2. Սիրեկանիդ նուրբ թփերը,
Տատանում է մեզմբ քամին.
Այն անհամար կոկոմները՝
Քեզ քաշում է իւր հոտին:
3. Բայց և այնպէս քո փափագս,
Դու չես աւնում լիովին.
Կամիս հանել դու կարծարս՝
Քո սիրեկան թանգ վարդին:
4. «Ի՞նչես այդչափ ախ տեղերվում,
«Դու իմ համար ողջ գիշեր.
«Արդեօք քեզնից աւելի ո՞ւմ՝
«Խոնարհին իմ տերւեներ:
5. «Մի՛ նեղանար դու սիրեկան,
«Պատրաստվում եմ բացուելու.
«Ահա՛ ճեղ քվում են կոկոնս՝
«Ահա՛ բացուեց կարմիր վարդ:»
Ա. Ս. Գ.



ՅՐԱԽԻՐՈՒՄՆ Ի ՎԱՐՔԱՑՈՒՆ:

1. Գառնուկ երեխայ՝ շուտով վեր կացէ՛ք,
Վաղուց է հաւը ծրկլըկուն կանչել,
Սրեւն ընկել է լուսամուտը՝
եւ օրը բաւականին բարձրացել.
Շուտով լուացուէ՛ք և հազնուեցէ՛ք՝
Ու ջերմ սրտերով աղօթքի կանգնէ՛ք:
2. Աղօթքից յետոյ՝ սիրով շտապէ՛ք,
Դէպի ուսումնարան հաւաքուեցէ՛ք.
Տեսէ՛ք, մարդիկ, անասունք և թռչունք՝
Բոլորը գնում են իրենց գործերին.
Մեզնից փախչում է ողջ մութ գիշերը՝
Բարիւոյսը գրկում առաւօտին:
3. Քահանայք գնացել են սուրբ տաճար,
Երկրագործը՝ իւր վաստակին արդար.
Մարդիկ վազվզում են դէպի փողոց՝
Այգեպանը առնում է, ձեռք քաղոց:
Տուր և առնողը՝ վաճառատունը,
Ծառայողը՝ իւր դիւանատունը.
4. Թռչունները իրենց ձագերի հետ,
Վաղուց է դուրս են եկել բոյներից.
Ձէն ձէնի տուած սիրով միմեանց հետ՝
Ծլվում են ամենայն կողմերից,
Ահա՛ այսպէս ամենը իւր գործին՝
Իսկ զո՛ւք մանուկներ, սիրէ՛ք դպրոցին:
Ա. Ս. Գ.



ՔԱՋԱԼԵՐՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ.

1. Մանուկ սիրուն զաւակ Հայկեան,
Կարդացիր դու Այբբենարան
Որում տեսար շատ քաղցր բան՝
Բոլորն էլ շուտ աւարտեցան:
2. Ընթերցարանն էլ շուտ կարդայ,
Որ գիտութիւնը քեզ մօտենայ
Յետոյ սուրբ կրօնքդ սովորել ջանայ՝
Որ քո հոգիտ ազատ մնայ:
3. Ատելութիւնըն՝ չա՛ր նախանձը՝
Վտխձան տուեց մեր փառացը,
Զը հետևես ա՛յն շաւղացը՝
Որ չմնաս դու ևս բացը:
4. Դու քեզ պահիր մաքուր վարքով
Խոհեմ եղիր ազնիւ բարքով
Զար ընկերներ մի ունենար՝
Որ դու երբէք չլինիս չար:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ.

1. Լեզու համակ սիրաշարժ
Քանի ձնիս պերձ՝ ու պայծառ,
Մինչ կըհնչես դուն քեզի
Սրտերն ամեն գողացար:
2. Հնչէ՛, հնչէ՛ յաւիտեան
Վեհ դիւցազանց պերձ՝ երգ դու.
Թոթուէ փոշիդ խոր մութէն
Ել երևան պերձ՝ երգ դու:

3. Յաւերժական սուրբ գրոց մէջ,
Կեանք միշտ նորէն ու նորէն
Կշտեալ անոյշ քո տողերդ
Թո՛ղ ամեն սիրտ արծարծին:

4. Ենորհ ունել Արարչէն
Կամ պէտք լինի աղօթել,
Նրթունքս սրտից բորբոքուած
Կ'աղաղակէ անարգել:—

5. Իմ մայրենի քաղցր լեզու
Կեանք անսասան, կեանք յաւիտ.
Կեանք միշտ լեզուդ Հայկարժան՝
Կեանք ծաղկալից ծաղկաւէտ:

Կ. Պաշտօն երգերից.

ԽԵՆՈՒՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՐԿՐ.

1. Ո՞վ կտտի կարգալն անպէտք ա մարդուս.
Կարդալով պէտքէ մեր աչքն բացուի,
Որ լաւ իմանանք ի՞նչ կայ աշխարհքումս՝
Եւ ուրիշն երբէք մեզ ծաղր չանի:

2. Լաւ իմացէք դո՛ւք, ծնողք սիրելիք.
Որ ձեր ասածը մեր մտքումն ունինք,
Աշխարհքն աշխարհքով դիպչի անցանի՝
Մենք ձեր բարի խրատն միշտ կը կատարենք:

3. Թո՛ղ Աստուած միշտ ձեզ բաղդաւոր պահի.
Ձեր շփաթն մեր գլխիցն անպակաս լինի,
Ինչ որ ձեր սիրան ա մենք միշտ այն կանենք՝
Որ բարեկամաց սիրան ուրախացնենք:

Խ. Աքաղեանց:



ՊԱՐՏԵՉ ՄԱՆԿԱԿԱՆ՝ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻ
ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՑԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ


- Ա. Եկեղեցւոյ առաւօտեան զանգակա-
հարուժիւնը.— երբորդի տալը:
- Բ. Սուրբ եկեղեցին է.
- Գ. Օդին է, (արալ).
- Դ. Կողմերն է (տեղաշար).
- Ե. Աերմոբէնքն են, որ ցանում են մար-
գիրում, ծրում են, և կանաչում
են մարգերը.
- Զ. Հոսոսն է.
- Է. Երկաթէ գրէն է իւր կոթովն.
- Ը. Փոսան է որ տանում է նամակներ.
- Թ. Բարկանալն է մարդոյս.
- Ժ. Գրքերն են.
- ԺԱ. Հաւն է.
- ԺԲ. Հայելին է.
- ԺԳ. Աթուռն է նստելու.
- ԺԴ. Շաքարն է.
- ԺԵ. Ռուսաց շաքարի գլուխներն են.
- ԺԶ. Տարուայ չորս եզանակներն են,
Գարուն, Ամառ, Աշուն, Ձմեռ.

- ԺԷ. Թանաքամանն է, որի մէջն կայ
քձուար, որ էնչպէս կամենաս
կը գրես.
- ԺԸ. Նաւթն է.
- ԺԹ. Գրէն է, որ վերցնում է միշտ
թանաքը.
- Ի. Գիւղացիք և քաղաքացիք, որ մի-
մեանց չեն սիրում:
- ԻԱ. Երկաթն է, որ երբ քցում են
կրակի մէջ կարմրում է.
- ԻԲ. Հարսանքատուր կամ նոյն տե-
սակ տեղեր.
- ԻԳ. Առհասարակ ծառերի պտուղ-
ներն են որ սխում են ծաղ-
կել յետոյ փոքր առ փոքր մը-
տակալում է, չենց ձեռ ևս սա-
լիս ծաղկել թափում է, և
մնում է ցողոլակը.
- ԻԴ. Շունն է.
- ԻԵ. Սուրճը, որ բոփում ենք և
աղում: Իսկ յետոյ եփում ենք
և վայելում:
- ԻԶ. Բանալին է


ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ.


| Երես | տող | սխալ | ուղիղ: |
|------|-----|-------------|--------------|
| 8 | 2 | կովի պատկեր | եզան պատկեր. |
| 10 | 2 | ոչխարի — | դառան — |
| 18 | 1 | տեղ | տեղ |
| 32 | 20 | նաեա՛, | նայեա՛, |
| 35 | 9 | երասուն | եասուն |
| 46 | 18 | չը պատահի | չը պատժի |
| 57 | 10 | Բղնձէ | Պղնձէ |
| — | 11 | բղնձից | պղնձից |
| 95 | 21 | Շեշտ | Շէշտ |
| — | 22 | Սասուր | Սատուր |


ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Մեր տպարանը որ այժմ ընդարձակուած է նոր մեքենաներով, նորանոր տառերով և զանազան պարագաներով՝ ընդունում է ամեն տեսակ տպագրութիւններ, զանազան լեզուներով: Պարզ, մաքուր և չափաւոր գներով: 

Տպարանը պատրաստ ունի և տպագրական թղթեր. 

Տպարանը ունի և իւր կազմարարական մասը, ուր ընդունում է ամեն տեսակ կազմելու գործեր. 

Տպարանը իւր վերայ է տռնում և սրբագրութիւնը եթէ ցանկանան. 

Տպարանը ընդունում է և ամեն տեսակ պատկերների փորագրել տալը. ականաւոր փորագրիչների գործարաններում, Մուկլայի, Ս. Պետրբուրգի և Վարշաւի. 

Մեր տպարանի հետ գործ ունեցողները զիմելու են՝ ВЪ Эривань

Типографію А. С. Гуламирянцѣ.

2003

3470

« Ազգային գրադարան



NL0062494

